ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

COUNTY OF LOS ANGELES
OFFICE FOR THE ADVANCEMENT OF EARLY CARE AND EDUCATION

Public Counsel

COUNTY OF LOS ANGELES
Public Health

Այս ուղեցույցը հովանավորվել է **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակի** կողմից՝ համագործակցությամբ **Լոս Անջելեսի Շրջանի Վերահսկիչների Խորհրդի, Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչության, Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժնի, Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչության,** և **Կալիֆորնիայի Հանրային Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի:**

Մենք ցանկանում ենք նաև իրենց մասնակցության համար մեր խորին երախտագիտությունը հայտնել Լոս Անջելեսի Շրջանի բազմաթիվ անհատների, որոնք հնարավոր դարձրին այս հրատարակությունը:

Շնորհակալություն՝

Դեբրա Քոլմանին
Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ

Լիան Դրոգինին
Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ

Չարլի Լևիսին
Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ

Քոննի Չանգին
Շրջանային Նախագծման Վարչություն

Ալիս Ուոնգին
Շրջանային Նախագծման Վարչություն

Նադեր Սամաանին
Հանրային Աշխատանքի Վարչություն

Խուան Պադիլային
Հրշեջ Վարչություն

Շողիկ Խաղարյանին
Համայնքային Խնամքի Արտոնագրում

Ռիթու Մահաջանին
Հանրային Փաստաբան

Դ Աբույանսին
Հանրային Փաստաբան

Ջեննի Չանգ Մեջիային
Ջեննի Չանգ Մեդիա Քընսալթինգ

Քյաթլին Հիլին
Ալսթոն & Բըրդ

Մայա Գրասսին
Ալսթոն & Բըրդ

Ուին Հոփկինսին
Ուին Հոփկինս Արթ + Դիզայն

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ

ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԵՂՄԵՔ
ՏԵՔՍՏԻ • ՎԱՆԴԱԿԻ • ԹԱԲԻ ՎՐԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Այս ուղեցույցի նպատակը 7
- Ինչպես օգտվել այս ուղեցույցից 7

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

- ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 8-9
- ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10
  - Կալիֆորնիա 10
  - Լոս Անջելեսի Շրջան 10
- ԿԱՐԵՐՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 11
  - Երեխաների խնամքի ընդհանուր աղբյուրներ 11
  - Աղբյուրներ՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար 11
  - Իրավաբանական գործակալություններ՝ անվճար 11
- ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ 11
  - Կալիֆորնիա 11
  - Լոս Անջելեսի Շրջան 11

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ

- ՇԱՊԻԿ 12
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 13
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 15
  - Չեն պահանջվում բիզնեսի արտոնագիր, Գոտիավորման (zoning) վկայական, բիզնեսի հարկեր և/կամ վճարումներ 15
  - Երեխաների ընտանեկան խնամքի տների վարձակալների իրավունքներ 16

- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ (UNINCORPORATED) ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 17
  - Ընդհանուր ակնարկ 17
  - Պարզել՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի տունը Լոս Անջելեսի չընդգրկված տարածքում է 18
  - Երեխաների ընտանեկան խնամքի տան վերանորգման և շինարարության հաստատում և թույլտվություն 18-19
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR) 19
  - Ընդհանուր ակնարկ 19
  - Վերանորոգումներ և շինարարություններ, որոնք պահանջում են և որոնք չեն պահանջում SPR 20
  - Ինչպես դիմել Տարածքի նախագծի ստուգման (SPR) համար 21
  - Տարածքի նախագծի ստուգման (SPR) գործընթաց, ժամանակացույց և ժամկետի երկարացում 22
- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 23
  - Ընդհանուր ակնարկ 23
  - Ինչպես դիմել Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության համար 24
  - Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության վճարումներ 24
  - Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության վկայականի տրման ժամանակացույցի և ժամկետի երկարացման ստուգացանկ 24
  - Շինարարության / նախագծի դիմում 25
  - Շինարարության թույլտվություն 26
  - Շինարարության ստուգման թույլտվություն 27
- ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD) 28
  - Ընդհանուր ակնարկ 28
  - Ստուգացանկ: CCLD-ին զեկուցման պահանջներ՝ երեխաների ընտանեկան խնամքի տներում վերանորոգման և/կամ շինարարության համար 28
- ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ) 29
  - Ընդհանուր ակնարկ 29
  - Հրդեհի հետ կապված ստուգումներ և հաստատման գործընթաց 29
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 30
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 31
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ 32

- ՇԱՊԻԿ 33
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 34-35
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ (UNINCORPORATED) ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 36
  - Ընդհանուր ակնարկ 37
  - Պարզեք՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի տունը Լոս Անջելեսի չընդգրկված տարածքում է 37
  - Հաստատումներ և թույլտվություն՝ տարածքը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու, վերանորոգումների և շինարարության համար 37
- ՏԵՂԻ ՈՐՈՇՈՒՄ 38
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ 39
  - Ընդհանուր ակնարկ 39
  - Երեխաների խնամքի կենտրոնների հաստատումների և վկայականի պահանջներ՝ ըստ գոտիավորման աղյուսակի. Գոտիավորում (zoning) 39
  - Սահմանումները Լոս Անջելեսի Շրջանում 40
  - Ինչպե՞ս դիմել Տարածքի նախագծի ստուգման (SPR) համար 42
  - Ստուգման գործընթաց և ժամանակացույց 43
  - Տարածքի նախագծի ստուգման (SPR) վճարումներ 43
  - Պայմանական օգտագործման թույլտվություն (CUP) և Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվություն (MCUP) 44
  - Շրջակա Միջավայրի գնահատում 45
  - Հանրային լսումներ CUP-ի և MCUP-ի վերաբերյալ 46
  - CUP-ի և MCUP-ի ժամանակացույց և վճարումներ 47
  - Մեքենաների կայանատեղիների պահանջներ՝ երեխաների խնամքի կենտրոնների համար 48
  - CUP-ի ստուգման գործընթաց և Գոտիավորման (zoning) թույլտվության ստուգացանկ 48

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 49
  - Ընդհանուր ակնարկ 49
  - Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Մասին Օրենք (ADA) 50
  - Ինչպե՞ս դիմել Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության համար 50
  - Նախագծի ստուգում և Շինարարության թույլտվության վճարներ 51
  - Նախագծի ստուգման և Շինարարության թույլտվության տրման ժամանակացույց և ժամկետի երկարացում 51
  - Ստուգացանկ. Շինարարության/ Նախագծի ստուգման դիմում 52
  - Շինարարության թույլտվություն 54
  - Շինարարության ստուգման թույլտվություն 54
  - Տարածքը զբաղեցնելու վկայական 54
- ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD) 55
  - Ընդհանուր ակնարկ 55
  - Ստուգացանկ: CCLD-ին զեկուցման պահանջներ՝ երեխաների ընտանեկան խնամքի կենտրոնում վերանորոգման և/կամ շինարարության համար 55
- ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ) 56
  - Ընդհանուր ակնարկ 56
  - Հրդեհի հետ կապված ստուգումներ և հաստատման գործընթաց 56
  - Նախագծի ստուգում Վարչության կողմից 56
  - Վճարներ 56
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 57
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 58
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ 59

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 60-61
- ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ (NONPROFIT) ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 61
  - Անվճար իրավաբանական օգնություն 61
  - Աղբյուրներ և աջակցություն՝ երեխաների խնամքի մատակարարների համար 62
- ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ 62

ՁԵՎԱԹՂԹԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- Ձևաթղթեր 63
- Հրապարակումներ 64

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սա օգտագործողներին հարմար ուղեցույց է («Ուղեցույց»), որն օգնում է երեխաների խնամքի հետագա և ներկայիս մատակարարներին ձեռք բերել հաստատումներ և թույլտվություն՝ Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) վերանորոգելու և կառուցելու երեխաների խնամաքի հաստատություններ, ներառյալ երեխաների ընտանեկան խնամաքի տները և երեխաների խնամաքի կենտրոնները: Այս ուղեցույցը տրամադրում է տեսողական գծապատկերներ և այն քայլերի ու պետական գործակալությունների նկարագրությունները, որոնք ընդգրկված են երեխաների խնամաքի հաստատությունները վերանորոգելու և կառուցելու համար հաստատումներ և թույլտվություն ձեռք բերելու մեջ, ինչես նաև տրամադրում է տեղեկություններ սրանց վերաբերող կանոնների, ժամանակացույցի, ձևաթղթերի և վճարումների մասին:

Երեխաների խնամաքի հաստատությունները վերանորոգելու և/կամ կառուցելու համար երեխաների խնամաքի մատակարարները հավանաբար կարիք կունենաո Շրջանի մի շարք վարչությունների կողմից ստուգումների և հաստատումների:
Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) երեխաների խնամաքի հաստատություններում որոշակի վերանորոգումների և շինարարության, ինչպես նաև սեփականությունը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու համար ստուգումների և հաստատումների համար պատասխանատու են Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչությունը (the Los Angeles County Department of Regional Planning), Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժինը (Department of Public Works, Building & Safety Division) և/կամ Հրշեջ Վարչությունը:
Այս Ուղեցույցում ներկայացվում է երեխաների խնամքի երեք տեսակ (այս Ուղեցույցում ընհանուր ներկայացվում են որպես «երեխաների խնամքի հաստատություններ»):

1 **Երեխաների Ընտանեկան Խնամքի Փոքր Տներ**
(զբաղվում են մինչև 8 երեխայի խնամքով)

2 **Երեխաների Ընտանեկան Խնամքի Մեծ Տներ**
(զբաղվում են 9-14 երեխայի խնամքով)

3 **Երեխաների Խնամքի Կենտրոններ**

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ

Այս ուղեցույցը հասանելի է առցանց և մի քանի լեզուներով: Այս ուղեցույցը կազմվել է 2022թ.-ի սեպտեմբերին և տրամադրում է տեղեկություններ, որոնք վերաբերում են Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) երեխաների խնամքի հաստատությունների վերանորոգմանը և շինարարությանը: Լոս Անջելեսի Շրջանում չընդգրկված տարածքների քարտեզը կարելի է գտնել **այստեղ:**

Ուղեցույցի վերջում ներկայացված է Աղբյուրների ցանկ, որն ընգրկում է տեղեկություններ այն գործակալությունների հետ կապի համար, որոնց հղում է արվել այս Ուղեցույցում, ինչպես նաև հղումներ համապատասխան ձևաթղթերին ու հրապարակումներին:

Երեխաների խնամքի մատակարարները կարող են այս Ուղեցույցն օգտագործել որպես աղբյուր, սակայն նրանց խրախուսվում է ստուգել իրենց երեխաների խնամքի հաստատությանը վերաբերող կանոններն ու ընթացակարգերը, քանի որ այս Ուղեցույցում ներկայացված տեղեկությունները կարող են ժամանակի ընթացքում փոխվել:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- **Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Մասին Օրենք (Americans with Disabilities Act (ADA))**
  «Հաշմանդամություն ունեցող ամերիակցիների մասին օրենքը» քաղաքացիական իրավունքի դաշնային օրենք է, որն արգելում է խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և պահանջում է, որ բոլոր հասարակական ծառայությունները և առևտրային հաստատությունները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- **Շինարարության թույլտվություն (Building Permit)**
  Թույլտվության տեսակ, որը պահանջում է հաստատում այն քաղաքի կամ շրջանի իշխանության կողմից, որտեղ գտնվում է երեխաների խնամքի հաստատությունը, և թույլ է տալիս նոր շինարարություն կամ եղած կառույցի ձևափոխում կամ ավելացում: Սա ներառում է էլեկտրականության, խողովակաշարերի, մեխանիկական և փորման աշխատանքների թույլտվությունները:

- **Ձեռնարկության (բիզնեսի) արտոնագիր (Business License)**
  Քաղաքային կամ շրջանային իշխանության կողմից տրված արտոնագիրը անհատներին տալիս է թույլտվություն՝ վարելու բիզնեսը: Քաղաքը կամ շրջանը կարող են նաև բիզնեսի արտոնագիրն անվանել բիզնեսի հարկերի հավաստագիր, բիզնեսի վճարումներ, տեղական բիզնեսի հարկ կամ տանը բիզնես վարելու թույլտվություն:

- **Երեխաների խնամքի կենտրոն (Child Care Center)**
  Երեխաների խնամքի ցանկացած մեծության հաստատություն, բացի երեխաների ընտանեկան խնամքի տներից, որտեղ խմբային պայմաններում օրական 24 ժամից քիչ զբաղվում են երեխաների (18-ից ցածր տարիքի անձինք) ոչ առողջական խնամքով և հսկողությամբ:

- **Երեխաների խնամքի հաստատություն (Child Care Facility)**
  Այս ուղեցույցում օգտագործվող եզրույթ՝ նշելու և երեխաների ընտանեկան խնամքի տները, և երեխաների խնամքի կենտրոնները:

- **Երեխաների խնամքի արտոնագիր (Child Care License)**
  Արտոնագիր՝ տրված Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) կողմից, որը թույլ է տալիս անհատներին Կալիֆորնիայում վարել երեխաների ընտանեկան խնամքի տուն կամ երեխաների խնամքի կենտրոն:

- **Երեխաների խնամքի մատակարար (Child Care Provider)**
  Անձ, որը վարում է երեխաների խնամքի հաստատություն:

- **Պայմանական օգտագործման թույլտվություն (Conditional Use Permit (CUP))**
  Գոտիավորման (zoning) թույլտվության տեսակ՝ տրված Շրջանային Նախագծման Վարչության կողմից, որը թույլ է տալիս սեփականության/տարածքի օգտագործում որոշ նպատակներով:

- **Շրջակա միջավայրի գնահատում (Environmental Assessment)**
  Շրջակա միջավայրի վրա որևէ նախագծի ազդեցության ստուգում:

- **Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին զեկույց (Environmental Impact Report (EIR))**
  Զեկույց՝ տեղեկացնելու հանրությանը և հանրային գործակալությունների՝ որոշում կայացնող մարմիններին շրջակա միջավայրի վրա նախատեսված ծրագրի հնարավոր ազդեցությունների մասին, նշելու այդ ազդեցությունները նվազեցնելու ուղիները և նկարագրելու ծրագրի ողջամիտ այլընտրանքները:

- **Երեխաների ընտանեկան խնամքի տուն (Family Child Care Home)**
  Հաստատություն, որը մատակարարի իսկ տանը 24 ժամից քիչ տևողությամբ կանոնավոր կերպով զբաղվում է 14 կամ ավելի փոքր թվող երեխաների խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ, երբ ծնողները կամ խնամակալները հեռու են, և այն կամ երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն է, կամ՝ երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն: Տունը ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

- **Ընդհանուր նախագիծ (General Plan)**
  Լայն շրջանակ և հեռավոր նպատակներ ընդգրկող ծրագրային փաստաթուղթ, որն ուղղորդում է հետագա զարգացումը և որը հանրային կյանքի բազմաթիվ ոլորտների հետ կապված նպատակների և քաղաքականության համապարփակ ժողովածու է: Կալիֆորնիայում քաղաքներից և շրջաններից պահանջվում է ունենալ Ընդհանուր նախագիծ:

- **Երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն (Large Family Child Care Home)**
  Հաստատություն, որը զբաղվում է ինևից տասնչորս երեխաների, ներառյալ՝ միչև 10 տարեկան այդտեղ բնակվող, խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ: Տունը ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

- **Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվություն (Minor Conditional Use Permit (MCUP))**
  Գոտիավորման (zoning) թույլտվության տեսակ՝ տրված Շրջանային Նախագծման Վարչության կողմից՝ կարգավորելու տարածքի օգտագործումն ու զարգացումը, որի շրջանակն ու ազդեցությունը սահմանափակ է, որը կարող է նպատակահարմար լինել համապատասխան գոտում և պահանջել հավելյալ նկատառումներ՝ ապահովելու շրջապատող համայնքի հետ պատշաճ ինտեգրում:

- **Նախագծի ստուգում (Plan Check)**
  Նախագծերի, գծագրերի և փաստաթղթերի փորձաքննություն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից՝ ապահովելու շինարարական կանոններին համապատասխանումը: Նախագծի ստուգում կարող է պահանջվել մինչև թույլտվության տրամադրումը:

- **Տարածքի նախագծի ստուգում (Site Plan Review (SPR))**
  Ստուգում է՝ արդյոք նախագիծը համապատասխանում է Լոս Անջելեսի Շրջանի տարածքների գոտիավորման (zoning) կանոններին: Տարածքի նախագծի ստուգումը վարչական գործողություն է և չի պահանջում հանրային լսում:

- **Երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն (Small Family Child Care Home)**
  Հաստատություն, որը զբաղվում է ութ կամ ավելի փոքր թվով երեխաների, ներառյալ՝ միչև 10 տարեկան այդտեղ բնակվող, խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ: Տունը ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

- **Գոտիավորում (zoning)**
  Քաղաքները և շրջանները հողատարածքը բաժանում են մասերի, որոնք կոչվում են գոտիներ, և յուրաքանչյուր գոտի ունի տարածքի զարգացման իր կանոններն ու կանոնակարգերը, որոնք տարբերվում են մյուս գոտիների կանոններից ու կանոնակարգերից: Քաղաքներն ու շրջանները պարտավոր են ստուգել, որ շինությունների օգտագործումը յուրաքանչյուր գոտում համապատասխան լինի է այն գոտու կանոններին, որտեղ գտնվում է տվյալ շինությունը:

- **Գոտիավորման (zoning) թույլտվություն**[1]
  Թույլտվություն, որը թույլ է տալիս սեփականության օգտագործումը որևէ հատուկ նպատակով: Գոտիավորման թույլտվությունը կարող է կոչվել նաև պայմանական օգտագործման թույլտվություն, վարչական օգտագործման թույլվություն, երկրորդային պայմանական օգտագորման թույլտվություն, տանը բիզնես վարելու թույլտվութուն կամ տարածքի նախագծի ստուգում (փորձաքննություն):

Ծանոթացեք Երեխաների Ընտանեկան Խնամքի Տան Համար «Բիզնեսի արտոնագրման և գոտիավորման թույլտվության մասին օրենքին» (CHILD CARE L. CTR. (2020-ի հունվար))՝ https://www.childcarelaw.org/content/know-the-law-about-business-licenses-and-Zoning-permits-for-family-child-care-homes/

Կալիֆորնիա

Կալիֆորնիայի Հանրային Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժին(CCLD): CCLD-ին (California Department of Social Services, Community Care Licensing Division) ապահովում է խնամվող երեխաների առողջությունն ու անվտանգությունը: CCLD-ին տրամադրում է արտոնագրեր երեխաների խնամքի բոլոր հաստատություններին, և դա ներառում է երեխաների ընտանեկան խնամքի բոլոր տները և երեխաների խնամքի բոլոր կենտրոնները: CCLD-ն ձգտում է խնամվող երեխաներին տրամադրել կանխարգելիչ, պաշտպանիչ և որակյալ ծառայություններ՝ ապահովելով, որ արտոնագրված հաստատությունները համապատասխանեն առողջության և անվտանգության սահմանված չափանիշներին՝ այդ նպատակով վերահսկելով հաստատությունները, տրամադրելով տեխնիկական օժանդակություն և հաստատելով գործընկերային հարաբերություններ մատակարարների, ծնողների և երեխաների խնամքի համայնքի հետ:

Լոս Անջելեսի Շրջան

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ (OAECE): OAECE-ն (Los Angeles County Department of Public Health, Office for the Advancement of Early Care & Education) ձևավորում է քաղաքականությանը վերաբերող առաջարկներ, օժանդակում է ծրագրավորմանը և տրամադրում է մի շարք ծառայություններ՝ նպատակ ունենալով բարելավել նախադպրոցական խնամքի և կրթության ծրագրերի մատչելիությունը, որակն ու հասանելիությունը: OAECE-ն աջակցում է ջանքերին՝ խրախուսելու նախադպրոցական խնամքի և կրթության ծառայությունների ընտրության հարցում ծնողների տեղեկացված լինելը և այս ծառայություններում ծնողների բովանդակալից ներգրավվածությունը: Ի վերջո, OAECE-ն աշխատում է տարբեր բաժինների հետ՝ խրախուսելու, որ ընտանիքները հասանելիություն ունենան այն հատուկ օգնությանը, որի կարիքն ունեն:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժին (Շինարարություն և Անվտանգություն): Շինարարության և Անվտանգության Բաժինը (Los Angeles County Department of Public Works, Building & Safety Division) տրամադրում է ծառայություններ՝ ապահովելու շինությունների անվտանգ կառուցվածք և կառուցում, շինարարական ավարտված նախագծերի հաստատում և կանոնների կիրառում: Շինարարության և Անվտանգության Բաժնի ծառայությունները ներառում են՝ մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների համար շինարարական թույլտվության տրամադրում, կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և պահպանման աշխատանքներիստուգում և վերահսկում՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով: Շինարարության և Անվտանգության Բաժինը տրամադրում է ծառայություններ Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas), ինչպես նաև հետևյալ քաղաքներում՝ Արտեզիա, Քարսոն, Սերրիտոս, Ինդուսթրի, Ըրվինդեյլ, Լա Քանյադա Ֆլինթրիջ, Լեյքվուդ, Լա Միրադա, Լոանդեյլ, Լոմիտա, Ռոլինք Հիլս, Ռոլինք Հիլս Էսթեյթ, Սանտա Ֆե Սփրինգս և Ուեսթլեյք Վիլիջ:

Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչություն (Շրջանային Նախագծում): Շրջանային Նախագծման Վարչությունը (Los Angeles County Department of Regional Planning) Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում իրականացնում է հողատարածքների օգտագործման նախագծման բոլոր գործառույթները: Շրջանային Նախագծման Վարչության ծառայությունները ներառում են՝ երկարաժամկետ նախագծերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և իրականացում, շրջակա միջավայրի ստուգում, տարածքների գոտիավորման օրենքների կիրառում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated areas):

Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն (Հրշեջ Վարչություն): Հրշեջ Վարչությունը (Los Angeles County Fire Department) ստուգում է երեխաների խնամքի հաստատությունները՝ ապահովելու, որ դրանք համապատասխանեն հրդեհի հետ կապված անվտանգության չափանիշներին, և նվազեցնելու վտանգավոր պայմանները, որոնք սպառնում են կյանքին, շրջակա միջավայրին, շինությանը. սա ներառում է ապահովելը, որ երեխաների խնամքի հաստատությունների և ներսը (օր.՝ տուն և ավտոտնակ), և դուրսը (օր.՝ կանաչապատ տարածք) լինեն մաքուր ու ազատ:

ԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Կալիֆորնիայի Երեխաների Խնամքի Աղբյուրներ և Ուղղորդումների Ցանցը օժանդակում է երեխաների խնամքի մատակարարներին՝ Կալիֆորնիայում երեխաների խնամքի կարիքները հասկանալու, կառավարության և բիզնեսների հետ գործընկերային հարաբերություններ զարգացնելու, փոփոխվող տնտեսական, հասարակական և ընտանեկան կարիքներին արձագանքելու հարցում: Աղբյուրներ և ուղղորդող գործակալություններ կան Կալիֆորնիայի բոլոր 58 շրջաններում, ներառյալ Լոս Անջելեսի Շրջանում, և նրանց ծառայություններն անվճար են ու հասանելի ծնողների և երեխաների խնամքի մատակարարների համար:

Լոս Անջելեսի Երեխաների Խնամքի Միությունը (CCALA), հայտնի՝ նաև որպես Միություն, եզակի և նշանակալի գործընկերություն է 10 գործակալությունների միջև, որոնք տեղամասային մակարդակում ծառայություններ են մատուցում համայնքներին: Հիմնադրված 1997թ.-ին՝ Միության գործակալությունները Լոս Անջելեսի Շրջանում ծառայություններ են մատուցում հազարավոր ընտանիքների և երեխաների խնամքի մատակարարների:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուղեցույց՝ ցերեկային ընտանեկան խնամքի տների համար (Նահանգային Հրշեջ Մարշալի Գրասենյակ (OSFM))

Անաչառ բնակարանային ապահովման պաշտպանություն՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար՝ հասանելի է անգլերենով, իսպաներենով, չինարենով, կորեերենով, ռուսերենով, սոմալերենով, թագալերենով և վիետնամերենով (Անաչառ Զբաղվածության և Բնակարանային Ապահովման Բաժին (DFEH))

Գոտիավորման, բիզնեսի և բնակարանային ապահովման աղբյուրներ՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար (Երեխաների Խնամքի Իրավունքի Կենտրոն)

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՆՎՃԱՐ

Երեխաների Խնամքի

Իրավունքի Կենտրոն

Հանրային Փաստաբան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

California Code of Regulations Title 22, Division 12, Chapter 1 (Child Care Center) or **Chapter 3** (Family Child Care Homes)

California Code of Regulations Title 19, Division 1 (State Fire Marshal)

California Health & Safety Code California

Building Code Title 24

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆ

Title 22 Planning and Zoning Code

Title 26 Building Code

Title 27 Electrical Code

Title 28 Plumbing Code

Title 29 Mechanical Code

Title 30 Residential Code

Title 31 Green Building Standards

Title 32 Fire Code

Title 33 Existing Building Code

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 15
  - Չեն պահանջվում բիզնեսի արտոնագիր, Գոտիավորման թույլտվություն, բիզնեսի հարկեր և/կամ վճարումներ 15
  - Երեխաների ընտանեկան խնամքի տների վարձակալների իրավունքներ 16
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ (UNINCORPORATED AREAS) 17
  - Ընդհանուր ակնարկ 17
  - Պարզել՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի տունը Լոս Անջելեսի չընդգրկված տարածքում է 18
  - Երեխաների ընտանեկան խնամքի տան վերանորոգման և շինարարության հաստատում և թույլտվություն 18-19
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ(SPR) 19
  - Ընդհանուր ակնարկ 19
  - Վերանորոգումներ և շինարարություններ, որոնք պահանջում են և որոնք չեն պահանջում SPR 20
  - Ինչպես դիմել Տարածքի նախագծի ստուգման (SPR) համար 21
  - Տարածքի նախագծի ստուգման (SPR) գործընթաց, ժամանակացույց և ժամկետի երկարացում 22
- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 23
  - Ընդհանուր ակնարկ 23
  - Ինչպես դիմել Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության համար 24
  - Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության վճարներ 24
  - Նախագծի ստուգման և/կամ Շինարարության թույլտվության վկայականի տրման ժամանակացույց և ժամկետի երկարացման ստուգացանկ 24
  - Շինարարության / Նախագծի դիմում 25
  - Շինարարության թույլտվություն 26
  - Շինարարության ստուգման թույլտվություն 27
- ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD) 28
  - Ընդհանուր ակնարկ 28
  - Ստուգացանկ: CCLD-ին զեկուցման պահանջներ՝ երեխաների ընտանեկան խնամքի տներում վերանորոգման և/կամ շինարարության համար 28
- ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ) 29
  - Ընդհանուր ակնարկ 29
  - Հրդեհի հետ կապված ստուգումներ և հաստատման գործընթաց 29
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 30
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 31
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ 32

ԸՆՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երեխաների ընտանեկան խնամքի տունը» հաստատություն է, որը մատակարարի իսկ տանը՝ 24 ժամից քիչ տևողությամբ կանոնավոր կերպով զբաղվում է 14 կամ ավելի փոքր թվող երեխաների խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ, երբ ծնողները կամ խնամակալներն իրենց հետ չեն, և որը կամ երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն է, կամ՝ երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն[2]: Տունը սահմանվում է որպես վայր, որտեղ երեխաների խնամքի մատակարարն ապրում է, և ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:[3]

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՓՈՔՐ ՏՈՒՆ

1 - 8 երեխա

«Երեխաների ընտանեկան խնամքի փոքր տունը» հաստատություն է, որը զբաղվում է ութ կամ ավելի քիչ թվով երեխաների, ներառյալ այդ տանն ապրող մինչև 10 տարեկան երեխաների[4] խնամքով, պաշտպանությամբ և վերահսկմամբ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԵԾ ՏՈՒՆ

9 - 14 երեխա

«Երեխաների ընտանեկան խնամքի մեծ տունը» հաստատություն է, որը զբաղվում է իննից տասնչորս երեխաների, ներառյալ այդ տանն ապրող մինչև10 տարեկան երեխաների[5] խնամքով, պաշտպանությամբ և վերահսկմամբ:

2 CAL. HEALTH & SAFETY CODE § 1596.78(a) (2019) (ԿԱԼ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ)

3 CAL. HEALTH & SAFETY CODE § 1597.45(f) (2019) (ԿԱԼ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ)

4 Երեխաների ընտանեկան խնամքի մեծ և փոքր տներում երեխաների տարիքային սահմանափակումների մասին իմանալու համար խնդրում ենք այցելել՝ https://cdss.ca.gov/Portals/9/CCLD/CCP%20Documents/Capacity%20Requirements%20FCCHs.pdf?ver=2019-06-28-121849-180

5 Երեխաների ընտանեկան խնամքի մեծ և փոքր տներում երեխաների տարիքային սահմանափակումների մասին իմանալու համար խնդրում ենք այցելել՝ https://cdss.ca.gov/Portals/9/CCLD/CCP%20Documents/Capacity%20Requirements%20FCCHs.pdf?ver=2019-06-28-121849-180

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Չեն պահանջվում բիզնեսի արտոնագիր, գոտիավորման (zoning) թույլտվություն, բիզնեսի հարկեր և/կամ վճարումներ

Կալիֆորնիայում քաղաքային և շրջանային իշխանությունները, ներառյալ չընգրկված տարածներում (unincorporated areas), չեն կարող պահանջել երեխաների ընտանեկան խնամքի մատակարարներից՝ մեծ կամ փոքր տների, ձեռք բերել բիզնեսի արտոնագիր կամ գոտիավորման այլ թույլտվություն՝ իրենց տունը երեխաների ընտանեկան խնամքի համար օգտագործելու համար:[6] Քաղաքները և շրջանները նաև չեն կարող պահանջել երեխաների ընտանեկան խնամքի մատակարարներից վճարել որևէ տեսակի վճարում կամ հարկ՝ իրենց տունը որպես երեխաների ընտանեկան խնամքի տուն օգտագործելու համար:[7]

Եթե քաղաքային կամ շրջանային իշխանությունները անօրինական կերպով պահանջում են երեխաների ընտանեկան խնամքի մատակարարներից ձեռք բերել բիզնեսի արտոնագիր կամ գոտիավորման այլ թույլտվություն կամ վճարել որևէ տեսակի վճար կամ հարկ՝ իրենց երեխաների ընտանեկան խնամքի տունը վարելու համար, մատակարարները կարող են կապ հաստատել անվճար իրավաբանական գործակալությունների հետ, ինչպես օրինակ՝ Հանրային Փաստաբանի կամ Երեխաների Խնամքի Իրավունքի Կենտրոնի հետ (տե՛ս **Աղբյուրների ցանկը**):

Երեխաների խնամքի մատակարարների վարձակալական իրավունքներ

Երեխաների ընտանեկան խնամքը համարվում է տարածքի՝ բնակության նպատակներով օգտագործում և թույլատրվում է բոլոր տեսակի տներում, ներառյալ՝ վարձակալված տարածքներում:[8]

Տան սեփականատերերը չեն կարող հրաժարվել այն վարձակալության տալ, չեն կարող նախատել, արգելել, վտարել վարձակալին կամ վարձը բարձրացնել միայն այն պատճառով, որ վարձակալը նախատեսում է վարել երեխաների ընտանեկան խնամքի տուն կամ արդեն վարում է այն:[9]

Եթե երեխաների ընտանեկան խնամքի մատակարարի տան սեփականատերը նրան ասում է, որ նա չի կարող զբաղվել երեխաների ընտանեկան խնամքով իր տանը կամ որ կբարձրացնեն տան վարձը երեխաների ընտանեկան խնամքի պատճառով, ի՞նչ կարող է անել մատակարարը:

Մատակարարները կարող են կապ հաստատել այնպիսի գործակալությունների հետ, ինչպիսիք են Հանրային Փաստաբանը կամ Երեխաների Խնամքի Իրավունքների Կենտրոնը՝ անվճար իրավաբանական օգնության համար (տե՛ս **Աղբյուրների Ցանկը**):

6 Տե՛ս՝ id. § 1591.45(b).
7 Id.
8 CAL. HEALTH & SAFETY CODE § 1597.45(a) (2019) (ԿԱԼ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ)
9 Տե՛ս՝ id. § 1597.41(a)-(b) (2019).

- Բացելու համար արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն՝ խնամելու մինչև 6 երեխա, կամ արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն՝ խնամելու մինչև 12 երեխա: Մինչև երեխաների խնամքի տուն աշխատեցնելը վարձակալությամբ ապրող երեխաների խնամքի մատակարարները պետք է գրավոր տեղեկացնեն տան սեփականատիրոջը առնվազն 30 օր առաջ՝ օգտագործելով LIC 9151 ձևաթուղթը: Նշում՝ երեխաների ընտանեկան խնամքի փոքր տան մատակարարները կարիք չունեն ստանալու տան սեփականատիրոջ թույլտվությունը՝ մինչև 6 երեխայի խնամքով զբաղվելու համար, և երեխաների ընտանեկան խնամքի մեծ տան մատակարարները կարիք չունեն ստանալու տանտիրոջ թույլտվությունը՝ մինչև 12 երեխայի խնամքով զբաղվելու համար:
- Բացելու համար արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն՝ խնամելու 7-8 երեխա, կամ արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն՝ խնամելու մինչև 13-14 երեխա: Մինչև երեխաների խնամքի տուն աշխատեցնելը վարձակալությամբ ապրող երեխաների խնամքի մատակարարները պետք է գրավոր տեղեկացնեն տան սեփականատիրոջը առնվազն 30 օր առաջ՝ օգտագործելով LIC 9151 ձևաթուղթը, նաև կարիք ունեն ստանալու տան սեփականատիրոջ թույլտվությունը՝ օգտագործելով LIC 9149 ձևաթուղթը:
- Եթե գործող երեխաների ընտանեկան խնամքի մեծ տունը տեղափոխվում է այլ տուն: Երեխաների խնամքի մատակարարները, որոնք վարձակալում են իրենց բնակարանը, պետք է մինչև երեխաների խնամքի տուն աշխատեցնելը գրավոր տեղեկացնեն իրենց նոր տան սեփականատիրոջը առնվազն 30 օր առաջ՝ օգտագործելով LIC 9151 ձևաթուղթը: Երեխաների խնամքի մատակարարը կարող է տան սեփականատիրոջը գրավոր տեղեկացնել 30 օրից կարճ ժամանակահատվածում, եթե Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության՝ Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժինը (CCLD) նոր տարածքում գործելը հաստատի 30 օրից կարճ ժամանակահատվածում կամ եթե նոր տարածքը արտոնագրվում է 30 օրից կարճ ժամանակահատվածում:[10]
- Վարձակալների ապահովագրություն: Երեխաների խնամքի մատակարարները պետք է խոսեն իրենց տանտիրոջ հետ՝ պարզելու՝ արդյոք իրենցից պահանջվում է ունենալ վարձակալության ապահովագրություն՝ որպես իրենց վարձակալության պայմանագրի մաս: Վարձակալության ապահովագրությունը չի փակում որևէ դեպքի վնաս, որը կապված է երեխաների խնամքի ծառայությունների հետ, և տարբերվում է պատասխանատվության ապահովագրությունից (liability insurance): Վարձակալության ապահովագրությունը սովորաբար փակում է վարձակալի ունեցվածքի հետ կապված վնասը, եթե լինում են դրանց վնասվելու, գողացվելու կամ ոչնչացվելու դեպքեր:
- Տե՛ս Հանրային Փաստաբանի «Տան սեփականատերերի և վարձակալների ուղեցույց՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար» կայքը՝ հավելյալ տեղեկությունների համար:

10 Յոթ կամ ութ երեխա խնամող երեխաների փոքր ընտանեկան խնամքի մատակարարները և 13 կամ 14 երեխա խնամող երեխաների մեծ ընտանեկան խնամքի մատակարարները պետք է նաև ստանան իրենց տանտիրոջ թույլտվությունը, որպեսզի կարողանան խնամքի տներն աշխատեցնելու՝ օգտագործելով LIC 9149 ձևը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ (UNINCORPORATED AREAS)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Երեխաների ընտանեկան խնամքի տների վերանորոգումն ու շինարարությունը Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) կարող է պահանջել հաստատում Շրջանի մի շարք պետական գործակալությունների կողմից: Երեխաների ընտանեկան խնամքի տների սովորական վերանորոգումն ու շինարարությունը կարող են ներառել՝

- Ներկում
- Գորգի փոխարինում կամ ավելացում
- Օդորակիչի տեղադրում
- Տանիքի վերանորգում կամ նորի տեղադրում
- Խողովակաշարի վերանորոգում
- Էլեկտրականության բարելավում
- Երեխաների խնամքի նպատակով ավտոտնակի տարածքի օգտագործում և/կամ փոփոխում
- Կանաչապատ տարածքի փոփոխում, ներառյալ՝ ցողիչների տեղադրում
- Պատերի հեռացում կամ ավելացում՝ եղած սենյակների չափսերը փոխելու նպատակով, կամ սենյակների ավելացում

Շրջանից պահանջվում է ապահովել, որ շինությունները լինեն անվտանգ և որ դրանց օգտագործումը համապատասխանի թաղամասին և այդ տարածքում բնակելի, առևտրային կամ այլ նպատակներով հողատարածքների օգտագործմանը: Այս պարտավորությունը կատարելու նպատակով Շրջանն ունի գործընթացներ՝ հասկանալու համար, թե ինչ վերանորոգումներ և/կամ շինարարություն է նախատեսվում, որպեսզի որոշի՝ արդյոք փոփոխություններն անվտանգ են, համապատասխանում են տարածքում այլ տիպի օգտագործումներին և արդյոք գոտիավորման և/կամ շինարարության թույլտվություններ են անհրաժեշտ: Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժինը (CCLD)՝ պետական գործակալություն, որը Կալիֆորնիայում կարգավորում և վերահսկում է երեխաների խնամքի հաստատությունները, նույնպես պետք է տեղեկացվի արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի տներում նախատեսվող վերանորոգումների ու շինարարության մասին: CCLD-ին իր կողմից ստուգումներ է անում՝ վստահ լինելու, որ վերանորոգումը և/կամ շինարարությունը համապատասխանում են CCLD-ի արտոնագրման պահանջներին:

ՊԱՐԶԵԼ՝ ԱՐԴՅՈՔ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՈՒՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՏԱՐԾՔՆԵՐՈՒՄ Է (UNINCORPORATED AREAS)

Իմանալու համար՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի տան վերանորոգման և/կամ շինարարության նախագիծը պահանջում է Լոս Անջելեսի Շրջանի կողմից ստուգում և հաստատում, երեխաների խնամքի մատակարարները նախ պետք է պարզեն՝ արդյոք իրենց երեխաների ընտանեկան խնամքի տունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածներում է (unincorporated area) կամ Լոս Անջելեսի Շրջանում գտնվող ընդգրկված քաղաքում է (incorporated city):

Երեխաների խնամքի մատակարարները կարող են կապ հաստատել **Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչության** (Շրջանային Նախագծում) հետ՝ պարզելու, թե արդյոք իրենց հաստատությունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածներում՝ հետևելով այս քայլերին.

1. **Այցելել Լոս Անջելեսի Շրջանի Z-Net կայքէջ**
2. **Տպել երեխաների խնամքի հաստատության հասցեն որոնումների վանդակում, որը գտնվում է էջի վերևի ձախ անկյունում:**

Եթե տարածքը հայտնվում է ԿԱՊՈՒՅՑ գույնով, հաստատությունը գտնվում Լոս Անջելեսի Շրջանի **չընդգրկված** տարածներում , և երեխաների խնամքի մատակարարները կարող են հենվել այս Ուղեցույցի տեղեկությունների վրա:

Եթե տարածքը հայտնվում է ԿԱՐՄԻՐ գույնով, հաստատությունը գտնվում Լոս Անջելեսի Շրջանի **ընդգրկված** քաղաքում , և երեխաների խնամքի մատակարարները պետք է կապ հաստատեն այն ընդգրկված քաղաքի Նախագծման Վարչության հետ, որի տարածքում գտնվում է իրենց հաստատությունը՝ պարզելու, թե որոնք են հաստատման և թույլտվության պահանջները:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Երեխաների խնամքի մատակարարները, որոնք ցանկանում են երեխաների ընտանեկան խնամքի տանը վերանորոգում և/ կամ շինարարություն անել, պետք է կապ հաստատեն հետևյալ **3 վարչությունների** հետ՝ պարզելու՝ արդյո՞ք իրենց վերանորոգման և/կամ շինարարության նախագծի համար պահանջվում է փորձաքննություն և հաստատում:

- **Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչություն (Շրջանային Նախագծում)**
- **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժին (Շինարարություն և Անվտանգություն)**
- **Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժին (CCLD)**

Եթե վերը նշված վարչություններից որևէ մեկը որոշի, որ պահանջվում է Հրշեջ Վարչության կողմից ստուգում և հաստատում, վարչություն(ներ)ը կապ կհաստատի Հրշեջ Վարչության հետ:

Չնայած յուրաքանչյուր վարչություն ուշադրություն է դարձնում որևէ հատուկ կողմի, նրանք բոլորն էլ ստուգում են վերանորոգման / շինարարության նախագծերը, տրամադրում են թույլտվության վկայականներ և կատարում են ստուգումներ տեղանքում: Վարչությունները ստուգում են երեխաների խնամքի բոլոր հաստատությունների վերանորոգումների և/կամ շինարարությունների նախագծերը: Նրանք կարող են գանձել որևէ վճար կամ մի քանի վճարներ: Նախագծերը ստուգելու և թույլտվությունը տալու ժամանակացույցները կարող են տարբեր վարչություններում տարբեր լինել:

Հաջորդ բաժինները նկարագրում են յուրաքանչյուր վարչության գործընթացները, ժամանակացույցները և վճարումները՝ կապված Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) երեխաների խնամքի ընտանեկան տներում վերանորոգումների և շինարարության հետ, և հիմնված են **Լոս Անջելեսի Շրջանի նախադպրոցական խնամքի և կրթության հաստատությունների գործընթացների վեբինարի** վրա, որը 2022թ.-ի փետրվարի 10-ին համատեղ ներկայացվել է Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակի(OAECE), Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության ու Հրշեջ Վարչությունների և Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) կողմից:[11]

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Շրջանային Նախագծման Վարչությունը Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) իրականացնում է հողատարածքի օգտագործման նախագծման բոլոր գործառույթները: Շրջանային Նախագծման ծառայությունները ներառում են երկարաժամկետ ծրագրերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և իրականացում, շրջակա միջավայրի փորձաքննություն և գոտիավորման (zoning) օրենքների կիրառում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated areas):

Երեխաների խնամքի մատարարներից, որոնք ցանկանում են վերանորգում և/կամ շինարարություն անել երեխաների ընտանեկան խնամքի տանը, կարող է պահանջվել ձեռք բերել Շրջանային Նախագծման Վարչության փորձաքննություն և հաստատում: Կարևոր է նշել, որ Լոս Անջելեսի Շրջանի տարբեր չընդգրկված տարածքներ կարող են ունենալ իրենց հատուկ տարբեր պահանջներ: Այդ իսկ պատճառով, երեխաների խնամքի մատարարներին խրախուսվում է կապ հաստատել Շրջանային Նախագծման հետ՝ ճշտելու, թե ինչ ստուգումներ, հաստատումներ և վճարումներ են պահանջվում:

Տարածքի նախագծի ստուգումը (SPR) պարզում է՝ արդյոք նախագիծը համապատասխանում է Լոս Անջելեսի Շրջանի գոտիավորման (zoning) կանոններին ևՀամայնքի Չափանիշների Վարչաշրջանի (Community Standards District) համապատասխան դրույթներին կամ հատուկ ոլորտներին՝ կապված սեփականության սահմաններից որոշված հեռավորության (setbacks), մեքենաների կայանատեղիների, բարձրության և համապատասխան այլ չափանիշների հետ: SPR-ը վարչական գործընթաց է և հանրային լսում չի պահանջում:

11Լոս Անջելեսի Շրջանի Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունների Գործընթացի վեբինարը՝ ներկայացված PowerPoint-ով, կարելի է գտնել այստեղ՝ https://childcare.lacounty.gov/wp-content/uploads/2022/02/FINAL-PDF-LA-County-Supports-for-CDSS-Renovations-RFA-Webinar-2.10.22_ENSPA-99.pdf

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԵՎ ՈՐՈՆՔ ՉԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR)

SPR ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ	SPR ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է, ԱՆՎՃԱՐ Է	SPR ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ
Երեխաների խնամքի մատակարարները ԱՌԱՆՑ SPR-ի կարող են կատարել հետևյալ վերանորոգումները. ■ Ներկում ■ Պահարանների ավելացում, որը բավարարում է չափսերի հետ կապված պահանջները (օր.՝ խաղալիքների պահարանների ավելացում, որը բավարարում է բակում պահարանների համար սահմանված չափսերի պահանջները) ■ Անվտանգության համակարգի տեղադրում *Երեխաների խնամքի մատարարներին միշտ խրախուսվում է կապ հաստատել Շրջանային Նախագծման հետ՝ ճշտելու, թե արդյոք իրենց նախատեսած վերանորոգում(ներ)ը պահանջում են SPR:*	Հետևյալի համար պահանջվում է SPR, սակայն վճարումներ անել ՉԻ պահանջվում. ■ Լուսամուտների և դռների փոխում ■ Տանիքի վերանորոգում՝ առանց բարձրությունը փոխելու ■ Արևային վահանների տեղադրում տանիքին ■ Լողավազանի տեղադրում՝ սեփականության ետևի և կողքերի սահմաններից առնվազն 5 ոտնաչափ հեռու ■ Վերանորոգում և խնամք/պահպանում, որի դեպքում բարձրությունը կամ հատակի մակերեսը չի փոխվում	Հետևյալի համար պահանջվում է SPR, և ՊԵՏՔ Է ԳՈՒՄԱՐՎՃԱՐԵԼ. ■ Սենյակի ավելացում ■ Միջնապատերի ավելացում/ սենյակի ձևափոխում ■ Շինության բարձրության փոփոխում ■ Կայանատեղիների քանակի փոփոխում ■ Ցանկապատեր և պատեր ■ Դրսի խաղահրապարակ ■ Կանաչապատում, ներառյալ՝ ծառերի տնկման/ ծածկի պահանջներ (կայանատեղիների համար), կաղնիների հեռացում ■ Հոսանքի գեներատոր

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ (SPR) ԱՐԺԵՔՆ Է՝

$486.00

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ (SPR) ՀԱՄԱՐ

Տարածքի նախագծի ստուգում (SPR) նախաձեռնելու համար երեխաների խնամքի մատակարարը պետք է լրացնի դիմումի ձևը, որը պետք է ստորագրեն և տարածքի սեփականատերը, և երեխաների խնամքի մատակարարը (եթե մատակարարը վարձակալում է տարածքը): SPR-ի դիմումի ձևը հասանելի է EPIC-LA կայքէջում (սեղմեք “Apply” (դիմել), այնուհետև սեղմեք “Plans” (նախագծեր), իսկ հետո փնտրեք “DRP - Base Application - Permits & Reviews” (Շրջանային Նախագծումների Վարչություն. հիմնական դիմում. թույլտվություններ և հաստատումներ)):

Երբ երեխաների խնամքի մատակարարը հաստատի, որ իր երեխաների խնամքի ընտանեկան տան վերանորոգման և/կամ շինարարության համար պահանջվում է SPR, դիմումի գործընթացն ամբողջությամբ կկատարվի առցանց հետևյալ կերպով.

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ (SPR) ՀԱՄԱՐ.

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ ☑

- ☐ 1. Արձանագրվեք կամ մուտք արեք EPIC-LA-ի՝ ձեր արդեն գոյություն ունեցող էջ:
- ☐ 2. Գտեք ճիշտ դիմումի ձևը (ստուգեք Շրջանային Նախագծման հետ՝ հաստատելու համար):
- ☐ 3. Ներբեռնեք, լրացրեք, սկանավորեք և հանձնեք դիմումը՝ վերբեռնելով այն մատակարարի EPIC-LA էջին (որը որ ստեղծել եք վերը նշված Քայլ 1-ի ժամանակ)՝ սեղմելով “Apply” (դիմել), այնուհետև սեղմեք “Plans” (նախագծեր), իսկ հետո փնտրեք “DRP - Base Application - Permits & Reviews” (Շրջանային Նախագծումների Վարչություն. հիմնական դիմում. Թույլտվություններ և հաստատումներ):

SPR-ի դիմումը ներառում է հետևյալ նյութերը.

- ☐ Ճարտարապետական նախագծեր[12] (օր.՝ տարածքի նախագիծ, հատակագիծ, բարձրացումներ)
- ☐ Նախագծի մանրամասն նկարագրություն
- ☐ Փաստաթուղթ, որը ապացուցում է, թե ով է տարածքի սեփականատերը
- ☐ Տարածքի լուսանկարներ
- ☐ Կայանատեղիի մասին տեղեկություններ
- ☐ CCLD-ի արտոնագրի պատճեն
- ☐ Շինության առկա թույլտվության վկայականը (տրված Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից)
- ☐ Վճարումներ
- ☐ Պահանջվող այլ փաստաթղթեր, որոնք նշված են «Հողատարածքի օգտագործման դիմումի ստուգացանկում»

***Վերը նշված նյութերը պետք է հանձնել Շրջանային Նախագծման Վարչություն:**

12 Տարածքի նախագիծը պետք է գծագրված լինի մասշտաբով՝ մասշտաբը նշված լինի նախագծում, ամբողջությամբ չափագրված և այնպես գծագրված, որ հյուսիսը լինին էջի վերևում: Ճարտարապետների մասին տեղեկությունները կարելի է գտնել այս Ուղեցույցի վերջում՝ Աղբյուրների ցանկում:

SPR-Ի ԳՈՐԾԸՆԹԱՑ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

Երբ Շրջանային Նախագծման Վարչությունը ստանա Տարածքի նախագծի ստուգման (SPR) դիմումի նյութերը և ընդունի, որ դիմումն ամբողջական է, այն երեխաների խնամքի մատակարարին կուղարկի վճարման անդորագիր (invoice) ցանկացած վճարման համար, որը պետք է կատարել, և կստուգի դիմումի փաթեթը, ներառյալ՝ նախագիծը:

Երեխաների խնամքի մատակարարի մոտ կարող է հարց ծագել՝ արդյո՞ք ժամանակ կխնայվի, եթե իրենց վերանորոգման կամ շինարարության նախագծերը ստուգվեն միաժամանակ և Շրջանային Նախագծման Վարչության ու Շինարարության, և Անվտանգության Բաժնի կողմից (հայտնի՝ որպես միաժամանակյա գործընթաց):



ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԴՐԱԿԱՆ՝

Ձեռք բերել անհրաժեշտ հաստատումները և թույլտվությանները տարբեր վարչություններից և հավանաբար ժամանակ խնայել:

ԲԱՑԱՍԱԿԱՆ՝

Հնարավոր ֆինանսական վնասներ, քանի որ հնարավոր է՝ վարչությունները պահանջեն փոփոխություններ հանձնված նախագծերում, որը կարող է ավելացնել ծախսերը և ժամանակը:

1-2 ՇԱԲԱԹ

Այն նախագծի դեպքում, որի համար վճարում չի պահանջվում, երեխաների խնամքի մատակարարը կարող է սպասել, որ տարածքի նախագծի (SPR)/ գոտիավորման փորձաքննությունները (ստուգումները) **ավարտվեն 1-2 շաբաթում:**

6-8 ՇԱԲԱԹ

Այն նախագծի դեպքում, որի համար պահանջվում է վճարում, փորձաքննությունը կարող է **ավարտվել 6-8 շաբաթում:**

2-4+ ՀԱՎԵԼՅԱԼ ՇԱԲԱԹ

Եթե Շրջանային Նախագծումը պահանջում է որևէ փոփոխություն անել նախագծում, վերստուգման ժամանակահատվածը կարող է **գործընթացին ԱՎԵԼԱՑՆԵԼ ևս 2-4 շաբաթ:** Երբ SPR-ը հաստատվի, երեխաների խնամքի մատակարարը կարող է դիմել Շինարարության և Անվտանգության Բաժին՝ ստուգման համար:

* Երեխաների խնամքի մատակարարը պետք է նկատի ունենա, որ Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից հաստատված նախագծերն ուժի մեջ են 2 տարի՝ վճարելու դեպքում մեկ անգամ մեկ տարով երեկարացնելու հավանականությամբ: Նախագծի երկարացված այս ժամկետի լրանալուց հետո երեխաների խնամքի մատակարարը կարիք կունենա նորից դիմելու:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Շինարարության և Անվտանգության Բաժինն ապահովում է, որ շինությունների կառուցվածքը և շինարարությունը լինեն անվտանգ Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) և հետևյալ քաղաքներում՝ Արտեզիա, Քարսոն, Սերրիտոս, Ինդուսթրի, Ըրվինդեյլ, Լա Քանյադա Ֆլինթրիջ, Լեյքվուդ, Լա Միրադա, Լոանդեյլ, Լոմիտա, Ռոլինք Հիլս, Ռոլինք Հիլս Էսթեյթ, Սանտա Ֆե Սփրինգս և Ուեսթլեյք Վիլիջ: Շինարարության և Անվտանգության Բաժնի ծառայությունները ներառում են՝ մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների համար շինարարական թույլտվության տրամադրում, կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և խնամքի/պահպանման փորձաքննություն և վերահսկում՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով:

Շինարարության թույլտվություն կարող է պահանջվել նոր կառույցի շինարարության համար, արդեն գոյություն ունեցող շինությանը ավելացումներ անելու կամ այն վերանորոգելու համար: Սովորաբար շինարարության թույլտվություն պահանջվում է հետևյալի համար.

- **Նոր շինություններ**
- **Շինությունների ավելացումներ**
- **Վարձակալների համար բարեկարգումներ / շինության վերանորոգում**
- **Կից բնակելի միավոր (Accessory Dwelling Unit (ADU))**
- **Տարբեր մասեր** (տախտակամած, պատշգամբ, վեց ոտնաչափից բարձր ցանկապատ, վառարան, լողավազան, հենապատեր, հաշմանդամության նշանների տեղադրում, քայլուղի և այլն)
- **Ձևափոխում և վերանորոգում** (օգտագործման կամ զբաղեցման փոփոխություն, ավտոտնակի փոխակերպում, խոհանոցի ձևափոխում, ծեփապատում, լուսամուտ(ներ)ի և դռան(դռների) փոխում և այլն)
- **Փորման աշխատանքներ**
- **Նոր, ընդլայնված կամ փոխված՝**
  - **էլեկտրական իրեր**
  - **մեխանիկական իրեր**
  - **խողովակաշարի մասեր**

Մինչև շինարարության թույլտվություն ձեռք բերելը պետք է Շինարարության և Անվտանգության Բաժինը ստուգի նախագծերը՝ վստահ լինելու, որ շինությունը համապատասխանում է Շինարարական Օրենսգրքի չափանիշներին: Փորձաքննության այս գործընթացը հայտնի է որպես Շինարարության նախագծի ստուգում:

Շինարարական ծրագրերի մեծ մասի համար անհրաժեշտ է ունենալ ճշգրիտ և մանրամասն նախագծերի, բնութագրերի և օժանդակ փաստաթղթերի փաթեթ: Սովորական փոքր ծրագրերը կարող են ստուգվել Շինարարության և Անվտանգության Բաժնի գրասենյակ այցելուցյան ժամանակ կամ առցանց՝ EPIC-LA-ի միջոցով, որը առցանց հարթակ է Շինարարության և Անվտանգության թույլտվությունների էլեկտրոնային ծառայությունների համար: Ավելի բարդ ծրագրերի համար կարելի է հանդիպում նշանակել Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Երեխաների խնամքի մատակարարներին խրախուսվում է կապ հաստատել իրենց տարածքային Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ կամ օգտագործել EPIC-LA-ի թույլտվությունների օգնական ինտերնետային գործիքը՝ որոշելու, թե իրենք ինչ նախագծերի և թույլտվությունների կարիք ունեն իրենց երեխաների ընտանեկան խնամքի տան վերանորոգման և/կամ շինարարության համար: Պարզելուց հետո, թե ինչ նախագծեր և թույլտվություններ պահանջվում, երեխաների խնամքի մատակարարները կարող են համապատասխան դիմում(ներ)ի ձևերը ձեռք բերել EPIC-LA-ից: EPIC-LA-ի կայքում երեխաների խնամքի մատակարարները կարող են ստուգման և հաստատման համար հանձնել իրենց նախագծերը, բնութագրերը և օժանդակ փաստաթղթերը, վճարել թույլտվությունների վկայականների համար և դիմել թույլտվություն ձեռք բերելու համար: EPIC-LA-ի գլխավոր էջում երեխաների խնամքի մատակարարները կարող են սեղմել “Apply” («Դիմել») և օգտագործել որոնման վանդակը՝ գտնելու “Residential Addition/Alteration Building Permit”-ը (Բնակարանի ավելացման/ձևափոխման շինարարության թույլտվություն) կամ “Residential Repair/Replacement Building Permit”-ը (Բնակարանի վերանորոգման / փոխարինման շինարարության թույլտվություն): Որոշ գրասենյակներ ընդուն են միայն էլեկտրոնային դիմումներ ու նախագծեր, և երեխաների խնամքի մատակարարները պետք է խորհրդակցեն իրենց տարածքային Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ նախքան փաստաթղթերը հանձնելը:[17]

ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Նախագծի ստուգման և շինարարության թույլտվության համար վճարները լինում են տարբեր՝ կախված աշխատանքի արժեքից: Գնահատման ամենավերջին ժամանակացույցը կարելի է գտնել այստեղ:

Ամենացածր արժեքը $106.80 է:

Թույլտվության վկայականի յուրաքանչյուր երկարացման համար գանձվում է թույլտվության վկայականի արժեքի 25%-ը:

Երեխաների խնամքի մատակարարները կարող են նաև կապ հաստատել Շինարարության և Անվտանգության Բաժնի հետ (626) 458-3173 համարով՝ հավելյալ տեղեկությունների համար:

Տես Աղբյուրների ցանկը՝ հավելյալ տեղեկությունների համար:

ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐՑՈՒՄ

1-3 ԱՄԻՍ

Երեխաների ընտանեկան խնամքի տան համար Շինարարության և Անվտանգության նախագծի ստուգման տևողությունը **1-ից 3 ամիս է՝** կախված ծրագրի բարդությունից:

-12- ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆՈՒՄ Է 12 ԱՄԻՍ ՀԵՏՈ

Շինարարության և Անվտանգության կողմից տրված յուրաքանչյուր թույլտվության ժամկետը կլրանա, եթե աշխատանքները չսկսվեն 12 ամսվա ընթացքում:

ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԺԱՄԿԵՏԻ ՄԻԱՅՆ 1-2 ԵՐԿԱՐԱՑՈՒՄ՝ ՈՉ ԱՎԵԼ ՔԱՆ 180 ՕՐՈՎ

Ժամկետի մեկ կամ ավելի երկարացումներ կարող են տրվել թույլտվության ժամկետի լրանալուց հետո ոչ ավել քան 180 օրվա համար:

Սովորաբար տրվում են ժամկետի երկարացման միայն 2 թույլտվություններ, եթե Շինարարության և Անվտանգության Բաժինը չի եզրակացնում, որ կան դժվարություններ:

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ / ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՒՄ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ / ՆԱԽԱԳԾԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ ☑

- ☐ **Վերնագրի թերթիկ՝ նախագծի փաթեթի համար:** Պահանջվում է նախագծի առաջին էջի վրա ունենալ՝ շինության հասցեն, սեփականատերերի և նախագիծը պատրաստողների անունները և հասցեները, իրավական նկարագիրը, գնահատողի կողմից տրված հողատարածքի համար(ներ)ը (assessor parcel number), գոտու սահմանումը (zoning designation), շինարարության տեսակը, բնակվող/զբաղեցնող խումբը (խմբերը), կայանատեղիների ամփոփ նկարագիրը, շինության չափսերը, հատակի մակերեսի հարաբերակցությունը, տարածքի ծածկույթի աղյուսակագրումը, գոյություն ունեցող, նախատեսվող և պահանջվող կայանատեղիների աղյուսակագրումը և նախագծի նկարագրությունը:

- ☐ **Տարածքի նախագիծ:** Ամբողջությամբ չափագրված տարածքի նախագիծ, որը ցույց է տալիս շինության բոլոր սահմանների գտնվելու տեղանքը, օգտագործել թույլատրվող բոլոր այլ տարածների (easements) չափսերը, տարածքի մակերեսը, կանաչափատ տարածքը, դեպի հյուսիս ուղղված սլաքը, բոլոր կառույցների / շինությունների սահմաններից պահվող հեռավորությունների (structure-to-property line setback) չափսերը (ներկայիս և նախատեսվող), բոլոր ներկայիս և նախատեսվող կոմունալ հաշվիչները, հանրային կոյուղու հետ կապերը, կրակի հրշիջման կետերի տեղանքը և բոլոր քայլուղիների, մեքենաների ուղիների և կոշտ նյութերով ձևավորումների (hardscape) տեղանքն ու չափսերը: Եթե նախագծի ստեղծման համար կա պատասխանատու ճարտարապետ կամ մասնագետ-ինժեներ և նա դրոշմում է նախագծը, ապա նրանցից մեկը պետք է թանաքով դրոշմ (wet stamp) և թանաքով ստորագրություն (wet sign) դնի տարածքի նախագծի վրա:

- ☐ **Հատակագիծ:** Ամբողջությամբ չափագրված հատակագիծ է պահանջվում բոլոր հարկերի համար, որտեղ պետք է լինի շինարարություն: Պետք է նշել յուրաքանչյուր սենյակների ներկայիս և նախատեսվող օգտագործումը: Պետք է տրամադրել դռների և լուսամուտների համար ժամանակացույց՝ որոշելու դռների և պատուհանների չափսերը և տեսակները: Հատակագծերը պետք է ցույց տան ներկայիս և նախատեսվող բոլոր շինարարությունները:

- ☐ **Հաշմանդամություն ունեցողների համար մատչելիություն:** Ամբողջությամբ չափագրված մանրամասներ, որոնք ցույց են տալիս հաշմանդամություն ունեցողների համար մատչելիության պահանջներին համապատասխանում, ներառյալ՝ հաշմանդամների համար կայանատեղիներ, ուղիներ՝ հաշմանդամների համար կայանատեղիներից շենքի մուտք հասնելու համար, շենքի մուտք, շենքի ներսում շարժվելու ուղիներ և շինության ներսում հաշմանդամություն ունեցողների համար մատչելիություն, ներառյալ՝ զուգարանները, հեռախոսները, ցայտաղբյուրները և պահարանները/սեղանները (counters):

- ☐ **Արտաքին պատերի բարձրացում:** Ամբողջությամբ չափագրված բարձրության գծագրեր, որոնք ցույց են տալիս ներկայիս և ավարատված բարձրացումների սահմանները, պատերի և տանիքի երեսպատման նյութերը և բոլոր մուտքերի (բացվածքների) տեղանքները: Գծագիրը պետք է ցույց տա շինության բոլոր կարևոր հատվածների բարձրությունը: Բարձրացումները պահանջվում են միայն նոր շինությունների և ավելացումների համար:

*** Վերը նշված նյութերը և լրացված դիմումը պետք է հանձնել Շինարարության և Անվտանգության Բաժին:**

Նախագծերը, բնությագրերը և օժանդակ փաստաթղթերը կարող են պատրաստվել արտոնագիր ունեցող քաղաքացիական ճարտարագետի (ինժեներ), ճարտարապետի կամ գծագրողի կողից: Նախագծի կառուցվածքային մասնիկները պետք է ստուգված և կնքված լինեն արտոնագիր ունեցող ինժեների կողնից:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Երբ Շինարարության նախագծի ստուգումը հաստատվի, կարող է տվել շինարարության թույլտվության վկայական: Թույլտվության տրամադրումը կախված է նաև այլ գործակալությունների հաստատումներից, որոնք կարող են ներառված լինել՝ կախված աշխատանքների ծավալից: Թույլտվությունը կարող է տրվել միայն համապատասխան արտոնագիր(գրեր) և ապահովագրություն ունեցող շինարարական կապալառուին, որոշ դեպքերում՝ շինության սեփականատիրոջը, կամ գործակալին, որը ներկայացում է այս երկուսից որևէ մեկին:

Բացի նոր կառուցվող շինության, շինութան ավելացումների կամ վերանորոգման (վարձակալների համար բարեկարգումներ) համար շինարարության թույլտվություններից, Շինարարության և Անվտանգության Բաժինը կարող է նաև պահանջել երեխաների խնամքի մատակարարից ձեռք բերել հետևյալ թույլտվությունները.



- **Էլեկտրականությանը վերաբերող թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ որևէ հոսանքալար է տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում կամ վերանորոգվում:
- **Մեխանիկական մասերի համար թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում, հեռացվում կամ վերանորոգվում են ջեռուցման, օդափոխման, օդորակման սարքերը կամ դրանց խողովակաշարերը:
- **Խողովաշարի համար թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում, հեռացվում կամ վերանորոգվում են խողովակաշարը, ջրի խողովակները, հակահրդեհային ցողիչ համակարգը, խոտածածկի ցողիչ համակարգը, կոյուղու համակարգը կամ լողավազանի խողովակները: Այն պահանջվում է նաև ջրի տաքացուցիչը փոխելու համար:
- **Փորման աշխատանքների (grading) թույլտվություն**: Այս թույլտվության վկայականը սովորաբար պահանջվում է տարածքում նոր շինության կամ շինության ավելացման համար ցանկացած տեսակի փորումներ անելու համար:

Թույլտվության համար վճարումը որոշվում է ըստ աշխատանքի արժեքի: Փորելու թույլտվության արժեքը որոշվում է ըստ փորվող հողի ծավալի: Նշված մյուս թույլտվության վկայականների արժեքները կախված են վարդակների և սարքերի քանակից և/կամ մակերեսի քառակուսի ոտնաչափից:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳՈՒՄ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Բոլոր այն շինարարությունները կամ աշխատանքները, որոնց համար պահանջվում է շինարարական թույլտվություն, ենթակա են Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից ստուգման: Երբ թույլտվությունը տրամադրվում է, տրվում է ստուգման արձանագրության քարտ, որը փակցվում է աշխատանքների վայրում: Երբ թույլ տրված աշխատանքերը հասնում են որոշակի փուլի, թույլտվություն ստացողը պարտավոր է զանգահարել **Շինարարության և Անվտանգության շրջանային այն գրասենյակ,** որը տրամադրել է թույլտվությունը՝ տարածքում ստուգում նշանակելու համար: Տեսուչը կստուգի աշխատանքները՝ պարզելու՝ արդյոք դրանք համապատասխանում են օրենք(ներ)ի պահանջներին, հաստատված նախագծին ու բնութագրերին և արդյոք աշխատանքը համապատասխանում է թույլտվությամբ սահմանված աշխատանքին:

Պահանջվող ստուգայցերի քանակը կախված է աշխատանքի բարդությունից: Ստուգման արձանագրության քարտում կնշվի, թե շինարարության որ փուլում է պահանջվում ստուգում: Սովորաբար ամբողջ աշխատանքը կարիք ունի ստուգման մինչև շինարարության թույլտվության վկայականի ստանալը: Երբ տեսուչը հաստատի այդ հատվածը, աշխատանքը կարող է անցնել շինարարության հաջորդ փուլ: Ծրագիրը համարվում է ավարտված, եթե ձեռք են բերվել բոլոր պահանջվող գործակալությունների հաստատումները և թույլտվությանբ արված աշխատանք(ներ)ը անցել է/են վերջնական ստուգումը (օր.՝ ստուգման արձանագրության քարտը և թույլտվության վկայականը ստորագրված են և թվագրված՝ ունեն նշված ամսաթիվ): Երեխաների խնամքի մատակարարները կարող են կապ հաստատել **Շինարարության և Անվտանգության շրջանային գրասենյակի հետ՝** ստուգումների արժեքներն իմանալու համար:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD)

ԸՆՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժինը (CCLD) երեխաների խնամքի արտոնագրեր է տալիս երեխաների խնամքի բոլոր հաստատություններին, որը ներառում է բոլոր երեխաների ընտանեկան խնամքի տները և երեխաների խնամքի կենտրոնները: CCLD-ն պատասխանատու է՝ ապահովելու երեխաների անվտանգությունն ու առողջությունը՝ վերահսկելով երեխաների խնամքի հաստատությունները և դրանց հարկադրելով համապատասանել Կալիֆորնիայի Կարգավորումների Մասին Օրենքի Վերնագիր 22-ին (California Code of Regulations, Title 22) և Կալիֆորնիայի Առողջության և Անվտանգության Մասին Օրենքին (California Health & Safety Code):

Չնայած երեխաների խնամքի մատակարարները ձեռք են բերում անհրաժեշտ նախագծերի ստուգումները, նախագծերի փորձաքննությունները և /կամ թույլտվությունները Շրջանի համապատասխան բաժիններից, որոնք նշված են այս Ուղեցույցում՝ նրանցից պահանջվում է հայտնել CCLD-ին երեխաների խնամքի արտոնագրված հաստատություններում որոշ փոփոխությունների մասին, որոնք նկարագրված են ստորև:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ CCLD-ԻՆ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԵՐ. ՍՏՈՒԳԱՑԱՆԿ ☑

- ☐ 1. Նախքան վերանորոգում կամ շինարարություն սկսելը արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի տանը կամ այն տարածքում, որտեղ գտնվում է երեխաների ընտանեկան խնամքի տունը, երեխաների խնամքի մատակարարը պետք է հայտնի CCLD –ին հետևյալ նախատեսվող փոփոխությունների մասին.[13]
  - ☐ Ավտոտնակի ձևափոխում՝ երեխաների խնամքի սենյակին կից կամ ոչ կից:
  - ☐ Սենյակի ավելացում
  - ☐ Խաղային սարքերի կառուցում, ներառյալ ճաճանակները և մագլցելու սարքերը
  - ☐ Լողավազանների և տախտակամածերի տեղադրում
- ☐ 2. Արտոնագրված երեխաների խնամքի մատակարարները պետք է հայտնեն CCLD-ին, թե երբ է նախատեսվում վերանորոգում կամ շինարարություն անելը և երբ այն կավարտվի և արդյոք երեխաները մուտք են ունենալու վերանորոգվող կամ կառուցվող տարածներ:
- ☐ 3.Երբ վերանորոգումը /շինարարությունը ավարտվի, CCLD-ն կարիք կունենա տարածքում ստուգումներ անցկացնելու, որպեսզի համոզվի, որ դրանք համապատասխանում են Կալիֆորնիայի Կարգավորումների Մասին Օրենքի Վերնագիր 22-ին (California Code of Regulations, Title 22):
- ☐ 4.Երբ վերանորոգումը /շինարարությունը ավարտվի, երեխաների խնամքի մատակարարը պետք է CCLD-ին տրամադրի վերանորոգան /շինարարության համար պահանջվող տարածքում բոլոր շինարարական ստուգումների պատճենները:

13 CAL. CODE REGS. tit. 22, div. 12, ch. 3, § 102416.3 (2009).

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հրշեջ Վարչությունը ստուգում է երեխաների ընտանեկան խնամքի տները՝ ապահովելու, որ դրանք համապատասխանեն հրդեհային անվտանգության չափանիշներին, և վերացնելու վտանգավոր պայմանները, որոնք սպառնում են կյանքին, շրջակա միջավայրին, շինությանը. սա ներառում է ապահովում, որ երեխաների խնամքի տների ինչպես ներսը (օր.՝ տուն, ավտոտնակ), այնպես էլ դուրսը (օր.՝ կանաչապատ տարածք) լինեն մաքուր և ազատ:

ՀՐԴԵՀԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍՏՈՒԳԱՅՑԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- Եթե Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության և/կամ Համայնքային Խնամքի Արտոնագրման (CCLD) վարչությունները որոշեն, որ վերանորոգման կամ շինարարության համար պահանջվում է ստուգում և հաստատում Հրշեջ Վարչության կողմից, այս վարչությունները կապ կհաստատեն Հրշեջ Վարչության հետ՝ կազմակերպելու տարածքում ստուգումները:
- Երեխաների խնամքի հաստատություններում հրդեհի հետ կապված ստուգումները սովորաբար ներառում են հետևյալը՝ ելքերի, լույսերի, ծանր իրերի՝ (օր.՝ դռներ), ծխի դետեկտորների, եփելու հատվածի /խոհանոցի (ներառյալ՝ ապահովելու, որ բարձր տեղակայված համակարգերը ապահովեն խոհանոցի անձնակազմի անվտանգությունը), հրդեհի ազդանշանների վահանակների, ինչպես նաև հրդեհը կանխարգելող գործիքների հավաստագրերի ստուգում: Հրդեհի հետ կապված ստուգումներն ավարտելուց հետո Հրշեջ Վարչությունը կհայտնի իր բացահայտումների մասին CCLD-ին:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

ՔԱՅԼԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ☑

☐ 1. Եթե երեխաների խնամքի մատակարարները բացում են երեխաների ընտանեկան խնամքի մեծ կամ փոքր հաստատություն իրենց վարձակալած տանը, ապա նրանք պետք է տանտիրոջը գրավոր տեղեկացնեն այդ մասին՝ հաստատության գործարկումից 30 օր առաջ:

☐ **Նշում:** Երեխաների խնամքի փոքր տների մատակարարները կարիք չունեն ստանալու իրենց տանտիրոջ թույլտվությունը՝ մինչև 6 երեխա խնամելու համար, և երեխաների խնամքի մեծ տների մատակարարները կարիք չունեն ստանալու իրենց տանտիրոջ թույլտվությունը՝ մինչև 12 երեխա խնամելու համար:

☐ 2. Եթե երեխաների խնամքի փոքր տների մատակարարը նախատեսում է վերանորոգում կամ շինարարություն անել երեխաների խնամքի հաստատությունում, նա նախ պետք է ստուգի՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի հաստատությունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքում (unincorporated areas)՝ այցելելով այս կայքէջ:

☐ 3. Եթէ երեխաների խնամքի հաստատությունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքում (unincorporated areas), և երեխաների ընտանեկան խնամքի մատակարարը նախատեսում է վերանորոգում կամ շինարարություն անել հաստատությունում, նրան անհրաժեշտ է տարածքի նախագծի ստուգման (SPR) հաստատում Շրջանային Նախագծման կողմից: SPR-ի դիմումի ձևը և դիմելու գործընթացը կատարվում է առցանց՝ ացելելով EPIC-LA: Երեխաների խնամքի մատակարարներին խրախուսվում է կապ հաստատել Շրջանային Նախագծման Վարչության հետ՝ հավելյալ տեղեկությունների համար:

☐ 4.Երեխաների ընտանեկան խնամքի հաստատություններում որոշ վերանորոգումներ և շինարարություններ անելու համար անհրաժեշտ է նաև Շինարարության և Անվտանգություն նախագծի ստուգում՝ ձեռք բերելու համար շինարարության անհրաժեշտ թույլտվությունը: Երեխաների խնամքի մատակարարներին խրախուսվում է կապ հաստատել Շինության և Անվտանության Բաժնի իրենց տեղային գրասենյակի հետ կամ օգտագործել EPIC-LA-ի թույլտվության օգնական գործիքը՝ պարզելու, թե ինչ նախագծերի և թույլտվությունների կարիք կարող են իրենք ունենալ:

☐ 5.Երեխաների խնամքի մատակարարները, որոնք ունեն երեխաների ընտանեկան խնամքի արտոնագիր՝ տրված Համայնքային Խնամքի Արտոնագրման Վարչության (CCLD) կողմից, պարտավոր են տեղեկացնել CCLD-ին մինչև երեխաների ընտանեկան խնամքի հաստատությունում վերանորոգում կամ շինարարություն անելը:

☐ 6.Եթե Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության և/կամ Համայնքային Խնամքի Արտոնագրման (CCLD) վարչությունները որոշեն, որ վերանորոգման կամ շինարարության համար պահանջվում է ստուգում և հաստատում Հրշեջ Վարչության կողմից, այս վարչությունները կապ կհաստատեն Հրշեջ Վարչության հետ՝ կազմակերպելու հրդեհի հետ կապված ստուգայցեր:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԵՊՊԱՏԿԵՐՆԵՐ

ՍԿՍԵՔ ԱՅՍՏԵՂԻՑ

Արդյո՞ք երեխաների ընտանեկան խնամքի հաստատությունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքում (unincorporated area): Պարզելու համար այցելեք կայքէջ:

ԱՅՈ

Լոս Անջելեսի Շրջանը պահանջո՞ւմ է ստուգում և /կամ հաստատում վերանորոգման և շինարարության համար: Կապ հաստատեք Նախագծման և Շինարարության և Անվտանգության հետ:

ՈՉ

Ստուգեք ընդգրկված քաղաքների Նախագծման և Շինարարության և Անվտանգության բաժինների հետ՝ պարզելու՝ հաստատումներ անհրաժե՞շտ են:

ԱՅՈ

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR)
SPR-ի դիմումի և գործընթացի համար այցելեք EPIC-LA: Նաև կապ հաստատեք Շրջանային Նախագծման Վարչության հետ՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

ՈՉ

ՍՏՈՒԳՈՒՄ ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ
որոշ շատ փոքր վերանորոգումների համար (օր.՝ ներկում, մինչև որոշակի չափի պահարանների ավելացում և անվտանգության համակարգի տեղադրում):

SPR-ի ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ
որոշ փոքր վերանորոգումների համար(օր.՝ լուսամուտների և դռների փոխում, տանիքի վերանորոգում, լողավազանի ավելացում և այլն):

SPR-ի ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է
ծավալուն վերանորոգումների համար (օր.՝ սենյակի ավելացում, ձևափոխում, խաղահրապարակ, կանաչապատ տարածություն և այլն):

Պահանջվո՞ւմ է Շինարարության և Անվտանգության կողմից նախագծի ստուգում: Կապ հաստատեք տեղական Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ և օգտվեք EPIC-LA-ի՝ թույլտվության օգնականից՝ պարզելու, թե որ նախագծերն ու թույլտվությունները կարող են պահանջվել:

Տեղեկացրեք CCLD-ին՝ մինչև արտոնագրված երեխաների ընտանեկան խնամքի հաստատությունում վերանորոգում կամ շինարարություն անելը:

ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ
(նոր շինությունների, ավելացումների, վարձակալների համար բարեկարգումների և այլնի համար):
Պատրաստեք և հանձնք պահանջվող բոլոր նյութերը:

ՍՏԱՑԵՔ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ

* Եթե Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության և/կամ Համայնքային Խնամքի Արտոնագրման (CCLD) վարչությունները որոշեն, որ վերանորոգման կամ շինարարության համար պահանջվում է ստուգում և հաստատում Հրշեջ Վարչության կողմից, այս վարչություն(ներ)ը կապ կհաստատեն Հրշեջ Վարչության հետ՝ կազմակերպելու հրդեհի հետ կապված ստուգայցերը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ

ՎՃԱՐՈՒՄՆԵՐ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պետական հաստատությունները հաճախ գումար են գանձում՝ փակելու աշխատանքներն իրականացնելու համար ծախսերը, ներառյալ՝ երեխաների խնամքի հաստատությունների համար: Ներքևի աղյուսակը ցույց է տալիս պետական հաստատությունները՝ իրենց համապատասխան վճարումներով: Նկատի ունեցեք, որ վճարումները որոշ դեպքերում կարող են փոխվել ամեն տարի, և դա պետք է ճշտել համապատասխան գործակալության հետ:[14]

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ (ZONING) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	ՎՃԱՐ
ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR)	$486.00

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ[15]

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	ՎՃԱՐ
ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ	Առնվազն $106.80
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ[2]	Կախված է աշխատանքի արժեքից

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ	ՎՃԱՐ
ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ	$491.00՝ 1 -2 բնակվող ընտանիքի համար
ՀՐՇԵՋ ՑՈՂԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (վճարը կախված է հրշեջ ցողիչների գլխիկների քանակից)	ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (վճարը կախված է սարքերի քանակից)	ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ	ԱՆՎՃԱՐ

14 Այս Ուղեցույցում նշված վճարները գործում են 2022թ.-ի սեպտեմբերի դրությամբ:

15 Նախագծի ստուգման և Շինարարության թույլտվությունների արժեքը կախված է ընդգրկված աշխատանքի արժեքից: Գնահատման ամենավերջին ժամանակացույցը կարելի է գտնել այստեղ՝ https://dpw.lacounty.gov/bsd/content/fees.aspx. Ի Բացի Շինարարության թույլտվության վճարից, կարող են պահանջվել նաև վճարներ Էլեկտրականության թույլտվության, Մեխանիկական թույլտվության, Խողովակաշարի թույլտվության և փորելու թույլտվության համար, և դրանք կարելի է գտնել այստեղ՝ https://dpw.lacounty.gov/bsd/content/fees.aspx :

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ (UNINCORPORATED) ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 36
  - Ընդհանուր ակնարկ 37
  - Պարզել՝ արդյոք երեխաների ընտանեկան խնամքի տունը Լոս Անջելեսի չընդգրկված տարածքում է 37
  - Հաստատումներ և թույլտվություններ՝ սեփականությունը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու, վերանորոգումների և շինարարության համար 37
- ՏԵՂԻ ՈՐՈՇՈՒՄ 38
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ 39
  - Ընդհանուր ակնարկ 39
  - Երեխաների խնամքի կենտրոնների հաստատումների և թույլտվության պահանջներ՝ ըստ գոտիավորման աղյուսակի. Գոտիավորում (zoning) 39
  - Լոս Անջելեսի Շրջանի սահմանումներ 40
  - Ինչպե՞ս դիմել Տարածքի նախագծի ստուգման (SPR) համար 42
  - Ստուգման գործընթաց և ժամանակացույց 43
  - Տարածքի նախագծի ստուգման (SPR) վճարումներ 43
  - Պայմանական օգտագործման թույլտվություն (CUP) և Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվություն (MCUP) 44
  - Շրջակա Միջավայրի գնահատում 45
  - Հանրային լսումներ CUP-ի և MCUP-ի վերաբերյալ 46
  - CUP-ի և MCUP-ի ժամանակացույց և վճարումներ 47
  - Մեքենաների կայանատեղիների պահանջներ երեխաների խնամքի կենտրոնների համար 48
  - CUP-ի ստուգման գործընթաց և գոտիավորման թույլտվության ստուգացանկ 48
- ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 49
  - Ընդհնաուր ակնարկ 49
  - Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Մասին Օրենք (ADA) 50
  - Ինչպե՞ս դիմել նախագծի ստուգման և/կամ շինարարության թույլտվության համար 50
  - Նախագծի ստուգման և Շինարարության թույլտվության վճարումներ 51
  - Նախագծի ստուգման և Շինարարության թույլտվության թողարկման ժամանակացույց և ժամկետի երկարացում 51
  - Ստուգացանկ. շինարարության/ Նախագծի ստուգման դիմում 52
  - Շինարարության թույլտվություն 53
  - Շինարարության ստուգման թույլտվություն 54
  - Տարածքը զբաղեցնելու վկայական 54

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

- ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD) 55
  - Ընդհանուր ակնարկ 55
  - Ստուգացանկ. CCLD-ին զեկուցման պահանջներ՝ երեխաների ընտանեկան խնամքի կենտրոնում վերանորոգման և/կամ շինարարության համար 55
- ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ) 56
  - Ընդհանուր ակնարկ 56
  - Հրդեհի հետ կապված ստուգումներ և հաստատման գործընթաց 56
  - Նախագծի ստուգում Վարչության կողմից 56
  - Վճարումներ 56
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 57
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 58
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ 59

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխաների խնամքի կենտրոնը ցանկացած մեծության երեխաների խնամքի հաստատություն է՝ բացի երեխաների ընտանեկան խնամքի տներից, որտեղ խմբային պայմաններում երեխաների ոչ բժշկական խնամք և վերասկողություն է իրականացվում օրական 24 ժամից քիչ տևողությամբ: [16]

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ (UNINCORPORATED) ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) շինությունը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու, ինչպես նաև երեխաների խնամաքի կենտրոններում որոշակի վերանորոգումներ և շինարարություն անելու համար կարող են պահանջվել հաստատումներ Լոս Անջելեսի Շրջանի տարբեր վարչություններից: Երեխաների խնամքի կենտրոնների տարածված վերանորոգումներն ու շինարարությունները կարող են ընդգրկել՝

- Ներկում
- Գորգի փոխարինում կամ ավելացում
- Օդորակիչի տեղադրում
- Տանիքի վերանորգում կամ նորի տեղադրում
- Խողովակաշարի վերանորոգում
- Էլեկտրականության բարելավում
- Կանաչապատ տարածքի փոփոխում, ներառյալ՝ ցողիչների տեղադրում
- Պատերի հեռացում կամ ավելացում՝ եղած սենյակների չափսերը փոխելու նպատակով, կամ սենյակների ավելացում:

Շրջանից պահանջվում է ապահովել, որ շինությունները լինեն անվտանգ և որ դրանց օգտագործումը համապատասխանի թաղամասին և այդ տարածքում բնակելի, առևտրային կամ այլ նպատակներով հողատարածքների օգտագործմանը: Այս պարտավորությունը կատարելու նպատակով Շրջանն ունի գործընթացներ՝ հասկանալու համար, թե ինչ վերանորոգումներ և/կամ շինարարություն է առաջարկվում, որպեսզի որոշի՝ արդյոք շինությունը կարող է օգտագործվել որպես երեխաների խնամքի կենտրոն, և իմանա, թե ինչ վերանորոգումներ ու շինարարություններ են նախատեսվում՝ որոշելու համար, թե արդյոք փոփոխություններն անվտանգ են, համապատասխնում են տարածքի այլ տիպի օգտագործումներին և արդյոք գոտիավորման (zoning), շինարարության և/կամ հրդեհի անվտանգության հետ կապված թույլտվություններ են անհրաժեշտ: Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժինը (CCLD)՝ պետական գործակալություն, որը Կալիֆորնիայում կարգավորում և վերահսկում է երեխաների խնամքի հաստատությունները, նույնպես պետք է տեղեկացվի արտոնագրված երեխաների խնամքի հաստատություններում նախատեսվող վերանորոգումների ու շինարարության մասին: CCLD-ին իր կողմից ստուգումներ է անում՝ վստահ լինելու, որ վերանորոգումը և/կամ շինարարությունը համապատասխանում են CCLD-ի արտոնագրման պահանջներին:

16 Id. § 101152(c)(7).

ՊԱՐԶԵԼ՝ ԱՐԴՅՈՔ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՏԱՐԾՔՆԵՐՈՒՄ Է (UNINCORPORATED AREAS)

Որոշելու համար՝ արդյոք երեխաների խնամքի կենտրոնում վերանորոգման և/կամ շինարարության նախագիծը պահանջում է Լոս Անջելեսի Շրջանի կողմից ստուգում և հաստատում, երեխաների խանքմի մատակարարները նախ պետք է պարզեն՝ արդյոք իրենց երեխաների կենտրոնը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածներում է (unincorporated area) կամ Լոս Անջելեսի Շրջանում գտնվող չընդգրկված քաղաքում է (unincorporated city):

Երեխաների խնամքի մատակարարները կարող են կապ հաստատել **Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչության** (Շրջանային Նախագծում) հետ՝ պարզելու, թե արդյո՞ք իրենց հաստատությունը գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածներում՝ հետևելով այս քայլերին.

1. **Այցելել Լոս Անջելեսի Շրջանի Z-Net կայքէջ:**
2. **Տպել երեխաների խնամքի հաստատության հասցեն որոնումների վանդակում, որը գտնվում է էջի վերևի ձախ անկյունում:**

Եթե տարածքը հայտնվում է ԿԱՊՈՒՅՏ գույնով, հաստատությունը գտնվում Լոս Անջելեսի Շրջանի **չընդգրկված** տարածներում , և երեխաների խնամքի մատակարարները կարող են ստուգել այս Ուղեցույցի տեղեկությունները:

Եթե տարածքը հայտնվում է ԿԱՐՄԻՐ գույնով, հաստատությունը գտնվում Լոս Անջելեսի Շրջանի **ընդգրկված** քաղաքում , և երեխաների խնամքի մատակարարները պետք է կապ հաստատեն այն ընդգրկված քաղաքի Նախագծման Վարչության հետ, որի տարածքում գտնվում է իրենց հաստատությունը՝ պարզելու, թե որոնք են հաստատման և թույլտվության պահանջները:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Երեխաների խնամքի մատակարարները, որոնք ցանկանում են շինությունը (հայտնի՝ նաև որպես տարածք) օգտագործել որպես երեխաների խնամքի կենտրոն կամ երեխաների խնամքի կենտրոնում վերանորոգում և/ կամ շինարարություն անել, պետք է կապ հաստատեն հետևյալ **4 վարչությունների** հետ՝ պարզելու՝ արդյո՞ք իրենց վերանորոգման և/կամ շինարարության նախագծի համար պահանջվում է ստուգում և հաստատում:

- **Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչություն (Շրջանային Նախագծում)**
- **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժին (Շինարարություն և Անվտանգություն)**
- **Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժին (CCLD)**
- **Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն (Հրշեջ Վարչություն)**

Չնայած յուրաքանչյուր վարչություն ուշադրություն է դարձնում որևէ հատուկ կողմի, նրանք բոլորն էլ ստուգում են վերանորոգման / շինարարության նախագծերը, տրամադրում են թույլտվության վկայականներ և կատարում են ստուգումներ: Վարչությունները ստուգում են նախատեսված շինության օգտագործումը որպես երեխաների խնամքի կենտրոն, ինչպես նաև երեխաների խնամքի հաստատություններում վերանորոգումների և/կամ շինարարությունների նախագծերը: Նրանք կարող են գանձել մեկ կամ մի քանի վճարումներ: Նախագծերը ստուգելու և թույլտվության վկայականը տալու ժամանակացույցները կարող են տարբեր վարչություններում տարբեր լինել:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ որպես շինարարության անհրաժեշտ թույլտվությունները ձեռք բերելու՝ Շինարարության և Անվտանգության գործընթացի մի մաս՝ երեխաների խնամքի մատակարարները պետք է նաև ձեռք բերեն Հրշեջ Վարչության նախագծերի ստուգման թույլտվություն՝ երեխաների խնամքի կենտրոնում նոր շենքերի, առկա շենքերում ավելացումների, առկա շենքում կամ վարձակալված տարածքում վերանորոգումների համար:

ՏԱՐԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Երեխաների խնամքի կենտրոնի համար տեղ գտնելը կարող է լինել ժամանակատար, թանկ և դժվար: Խորհորդ է տրվում, որ երեխաների խնամքի հավանական տարածքը որոշելուց հետո երեխաների խնամքի մատակարարը կապ հասատատի Շրջանային Նախագծման,Շինարարության և Անվտանգության և Հրշեջ վարչությունների հետ՝ պարզելու, թե արդյոք տարածքի համար պահանջվում են գոտիավորման (zoning), շինության և/կամ հրդեհային անվտանգության հետ կապված լրացուցիչ թույլտվություններ:

Որոշ կարևոր կետեր՝ նկատի ունենալու համար, երբ ընտրում եք ձեր երեխաների խնամքի կենտրոնի տարածքը:

Արդյո՞ք կառույցն ունի բավականաչափ ներքին և արտաքին տարածք՝ ցանկալի թվով երեխաների խնամքի համար:

Արդյո՞ք Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Մասին Օրենքին հատուկ որևէ վերանորոգում է պահանջվում:

Կա՞ բավականաչափ գումար՝ վճարելու վերանորոգման և/կամ շինարարության համար պահանջվող գոտիավորման, շինության, հրդեհի անվտանգության բոլոր թույլտվություններ համար՝ մինչև երեխաների խնամքի կենտրոնը կսկսի գումար աշխատել:

Կա առք ու վաճաքի որևէ համաձայնագիր, որն անդրադառնում է, թե ինչ կլինի, եթե գոտիավորման, շինության, հրդեհի անվտանգության պահանջվող թույլտվությունները և/կամ երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիրը ձեռք բերելու հարցում լինեն ուշացում ներ կամ անկարողություն (օր.՝ կարո՞ղ է վարձի վճարումը հետաձգվել, կամ կարո՞ղ է վարձակալության համաձայնագիրը կասեցվել):

Մինչև երեխաների խնամքի հաստատության վկայականը կտրամադրվի, պետք է ձեռք բերվեն գոտիավորման, շինարարության, հրդեհի անվտանգության բոլոր թույլտվությունները, և տարածքը պետք է համապատասխանի Կալիֆորնիայի Աշխատանքի և Սոցիալական Ծառայությունների՝ Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) բոլոր համապատասխան կանոններին:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Շրջանային Նախագծման Վարչությունը Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) իրականացնում է հողատարածքի օգտագործման նախագծման բոլոր գործառույթները: Շրջանային Նախագծման ծառայությունները ներառում են՝ երկարաժամկետ ծրագրերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և իրականացում, շրջակա միջավայրի ստուգում, գոտիավորման (zoning) օրենքների կիրառման պարտադրում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated community):

Լոս Անջելեսի Շրջանում յուրաքանչյուր հողատարածք ունի գոտու սահմանում, և յուրաքանչյուր գոտի ունի հատուկ կանոններ և կանոնակարգեր հողատարածքի կառուցապատման համար, որոնք տարբերվում են այլ գոտիների կանոններից և կանոնակարգերից: Շրջանային Նախագծման Վարչությունը պարտավոր է ապահովել, որ հողատարածքի և/կամ շինության օգտագործումը համապատասխանի այն գոտու կառուցապատման չափանիշներին/կանոններին, որտեղ տարածքը գտնվում է:

Շրջանի յուրաքանչյուր գոտու կանոնները և կանոնակարգերը սահմանում են՝ արդյոք Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքում գտնվող շինությունը կարող է օգտագործվել որպես երեխաների խնամքի կենտրոն: Երեխաների խնամքի մատակարարը կարող է պարզել,թե որն է իրենց ընտրած երեխաների խնամքի կենտրոնի գոտին՝ կապ հաստատելով Շրջանային Նախագծման Վարչության հետ **(213) 974-6411** հեռախոսահամարով:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝ ԸՍՏ ԳՈՏԻՆԵՐԻ

Այս բաժնի տեղեկություններն ամփոփ ներկայացնում են, թե որ գոտիներում են թույլատրվում երեխաների խնամքի կենտրոններ, ինչպեսի հաստատումներ կամ գոտիավորման (zoning) թույլտվություններ են հարկավոր, ինչպես նաև այդ հաստատումները կամ թույլտվությունները ձեռք բերելու և պահանջվող վճարումներն անելու գործընթացները:

Համաձայն «[Շրջանի գոտիավորման հրամանագրի»](#)՝ երեխաների խնամքի կենտրոնները, որոնք ներառում են նորածինների կենտրոններ, նախակրթարաններ, երկարացված ցերեկային խնամքի հաստատություններ և դպրոցահասակ երեխաների կենտրոններ, կարող են գործել որոշ Գյուղատնտեսական (Agricultural), Բնակելի (Residential), Գյուղական (Rural), Առևտրային (Commercial) և Արդյունաբերական (Industrial) գոտիներում, եթե հաստատվում է Տարածքի նախագծի ստուգման(SPR), Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվության (MCUP) կամ Պայմանական օգտագործման թույլտվության դիմումը՝ ինչպես սահմանած է այս Ուղեցույցում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ. ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

CUP = Պայմանական օգտագործման թույլտվությունը (Conditional Use Permit) պահանջվում է տարածքը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու և երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիր ձեռք բերելու համար:

MCUP = Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվությունը (Minor Conditional Use Permit) պահանջվում է տարածքը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու և երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիր ձեռք բերելու համար:

SPR = Տարածքի նախագծի ստուգումը (Site Plan Review) պահանջվում է տարածքը որպես երեխաների խնամքի կենտրոն օգտագործելու և երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիր ձեռք բերելու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ

ԳՈՏՈՒ ԱՆՈՒՆԸ	A-1 Փոքր գյուղատնտեսական	A-2 Խոշոր գյուղատնտեսական	0-S Բաց տարածք	R-R Գյուղական բնակելի	W Ջրբաժան
ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	CUP	CUP	ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ	CUP	ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ

ԲՆԱԿԵԼԻ ԳՈՏԻ

ԳՈՏՈՒ ԱՆՈՒՆԸ	R-A Բնակելի գյուղատնտեսական	R-1 Մեկ ընտանիքի բնակարան	R-2 Երկու ընտանիքի բնակարան	R-3 Սահմանափակ խտության բազմաբնակարան	R-4 Միջին խտության բազմաբնակարան	R-5 Բարձր խտության բազմաբնակարան
ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	CUP	CUP	CUP	SPR <50 երեխա MCUP _ >50 երեխա	SPR	SPR

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՏԻ

ԳՈՏՈՒ ԱՆՈՒՆԸ	C-H Առևտրային մայրուղի	C-1 Սահմանափակումներով առևտրային	C-2 Թաղամասային առևտրային	C-3 Ընդհանուր առևտրային	C-M Առևտրային արտադրական	C-MJ Խոշոր առևտրային	C-R Հանգստի առևտրային
ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	SPR	SPR	SPR	SPR	SPR	SPR	SPR

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏԻ

ԳՈՏՈՒ ԱՆՈՒՆԸ	M-1 Թեթև արդյունաբերություն	M-1.5 Սահմանափակումներով խոշոր արդյունաբերություն	M-2 Խոշոր արդյունաբերություն	M-2.5 Ավիացիայի խոշոր արդյունաբերություն	M-3 Չդասակարգված	B-1 Բուսածածկ գոտի	B-2 Անկյունային բուսածածկ գոտի
ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	CUP	CUP	CUP	CUP	CUP	ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ	SPR

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐ

ԳՈՏՈՒ ԱՆՈՒՆԸ	C-RU Գյուղական առևտրային	MXD-RU Գյուղական խառը կառուցապատում	MXD Խառը կառուցապատում	SP Հատուկ ծրագիր
ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	SPR	SPR	SPR	ՏԵ'Ս ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐԸ

Երբ երեխաների խնամքի մատակարարը որոշում է երեխաների խնամքի հաստատության վայրը, նա կարող է իրենց հավանական տարածքի գոտիներին հատուկ տեղեկություններ գտնել՝ կապ հաստատելով Շրջանային Նախագծման հետ (տես Աղբյուրների ցանկը):
Խորհուրդ է տրվում, որ նախքան դիմումը Շրջանային Նախագծման Վարչություն ուղարկելը երեխաների խնամքի մատակարարը կապ հաստատի Շինարարության և Անվտանգության Բաժնի և Հրշեջ Վարչության հետ՝ պարզելու՝ արդյոք այս վարչությունների կողմից հաստատումները և/կամ թույլտվությունները նույնպես անհրաժեշտ են:

Որոշ գոտիներում երեխաների խնամքի կենտրոններ ընդհանրապես «չեն թույլատրվում»:

ABC Երեխաների Խնամքի Կենտրոնը կապ է հաստատել Շրջանային Նախագծման Վարչության հետ և տեղեկացվել է, որ իրենց տարածքը գտնվում է R-1 գոտում: Որ՞ը պետք է լինի ABC Երեխաների Խնամքի Կենտրոնի հաջորդ քայլը:

Համաձայն էջ 40-ի աղյուսակի՝ R-1 գոտում երեխաների խնամքի մատակարարները կարող են ձեռք բերել երեխաների խնամքի արտոնագիր և ծառայություններ տրամադրել, միայն եթե ձեռք են բերում CUP:

Երեխաների խնամքի մատակարարի մոտ կարող է հարց ծագել՝ արդյո՞ք ժամանակ կխնայվի, եթե իրենց վերանորոգման կամ շինարարության նախագծերը ստուգվեն միաժամանակ և Շրջանային Նախագծման Վարչության և Շինարարության, և Անվտանգության Բաժնի կողմից (հայտնի՝ որպես միաժամանակյա գործընթաց):

ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԴՐԱԿԱՆ՝

Ձեռք բերել անհրաժեշտ հաստատումները և թույլտվությունները տարբեր վարչություններից և հավանաբար ժամանակ խնայել:

ԲԱՑԱՍԱԿԱՆ՝

Հնարավոր ֆինանսական վնասներ, քանի որ հավանական է՝ վարչությունները պահանջեն փոփոխություններ հանձնված նախագծերում, որը կարող է ավելացնել ծախսերը և ժամանակը:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ (SPR) ՀԱՄԱՐ

Ինչպես ցույց է տալիս «Աղյուսակ. գոտիների սահմանումը Լոս Անջելեսի Շրջանում» բաժինը, Տարածքի նախագծի ստուգումը (SPR) պարզում է՝ արդյո՞ք նախագիծը համապատասխանում է Լոս Անջելեսի Շրջանի գոտիավորման (zoning) կանոններին և Համայնքի Չափանիշների Վարչաշրջանի (Community Standards District) համապատասխան դրույթներին կամ հատուկ ոլորտներին՝ կապված սեփականության սահմաններից որոշված հեռավորության (setbacks), մեքենաների կայանման, բարձրության և համապատասխան այլ չափանիշների հետ: Լոս Անջելեսի Շրջանի որոշ չընդգրկված տարածքների գոտիներում երեխաների խնամքի կենտրոնների համար պահանջվում է SPR: SPR-ը վարչական գործընթաց է, և հանրային լսում չի պահանջում:

Տարածքի նախագծի ստուգում (SPR) նախաձեռնելու համար երեխաների խնամքի մատակարարը պետք է լրացնի դիմումի ձևը, որը պետք է ստորագրեն և շինության սեփականատերը, և երեխաների խնամքի մատակարարը (եթե մատակարարը վարձակալում է տարածքը): SPR-ի դիմումի ձևը հասանելի է EPIC-LA կայքէջում (սեղմեք “Apply” (դիմել), այնուհետև սեղմեք “Plans” (նախագծեր), իսկ հետո փնտրեք “DRP - Base Application - Permits & Reviews” (Շրջանային Նախագծումների Վարչություն. հիմնական դիմում. Թույլտվություններ և հաստատումներ)):

Երբ երեխաների խնամքի մատակարարը հաստատի, որ իր երեխաների խնամքի կենտրոնի վերանորոգման և/կամ շինարարության համար պահանջվում է SPR, դիմումի գործընթացն ամբողջությամբ կկատարվի առցանց հետևյալ կերպ.

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ (SPR) ՀԱՄԱՐ. ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

- ☐ 1. Արձանագրվեք կամ մուտք արեք EPIC-LA-ի՝ ձեր արդեն գոյություն ունեցող էջ:
- ☐ 2. Գտեք ճիշտ դիմումի ձևը (ստուգեք Շրջանային Նախագծման հետ՝ հաստատելու համար):
- ☐ 3. Ներբեռնեք, լրացրեք, սկանավորեք և հանձնեք դիմումը՝ վերբեռնելով այն մատակարարի EPIC-LA էջում (որը որ ստեղծել եք վերը նշված Քայլ 1-ի ժամանակ)՝ սեղմելով “Apply” (դիմել). այնուհետև սեղմեք “Plans” (նախագծեր), իսկ հետո փնտրեք “DRP - Base Application - Permits & Reviews” (Շրջանային Նախագծումների Վարչություն. հիմնական դիմում. Թույլտվություններ և հաստատումներ):

SPR-ի դիմումը ներառում է հետևյալ նյութերը.

- ☐ Ճարտարապետական նախագծեր[17] (օր.՝ տարածքի նախագիծ, հատակագիծ, բարձրացումներ)
- ☐ Նախագծի մանրամասն նկարագրություն
- ☐ Փաստաթուղթ, որը ապացուցում է, թե ով է տարածքի սեփականատերը
- ☐ Տարաքի լուսանկարներ
- ☐ Կայանատեղիի մասին տեղեկություններ
- ☐ CCLD-ի արտոնագրի պատճեն
- ☐ Շինարարության առկա թույլտվության վկայականը (տրված Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից)
- ☐ Վճարումներ
- ☐ Պահանջվող այլ փաստաթղթեր, որոնք նշված են «Հողատարածքի օգտագործման դիմումի ստուգացանկում»

***Վերը նշված նյութերը պետք է հանձնել Շրջանային Նախագծման Վարչություն:**

17 Տարածքի նախագիծը պետք է գծագրված լինի մասշտաբով՝ մասշտաբը նշված լինի նախագծում, ամբողջությամբ չափագրված և այնպես գծագրված, որ հյուսիսը լինին էջի վերևում: Ճարտարապետների մասին տեղեկությունները կարելի է գտնել այս Ուղեցույցի վերջում՝ Աղբյուրների ցանկում:

SPR-Ի ԳՈՐԾԸՆԹԱՑ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

Երբ Շրջանային Նախագծման Վարչությունը ստանա Տարածքի նախագծի դիմումի նյութերը և ընդունի, որ դիմումն ամբողջական է, այն երեխաների խնամքի մատակարարին կուղարկի վճարման անդորագիր (invoice) ցանկացած վճարման համար, որը պետք է կատարել, և կստուգի դիմումի փաթեթը, ներառյալ նախագիծը:

6-8 ՇԱԲԱԹ

Եթե Շրջանային Նախագծումը պահանջում է որևէ փոփոխություն անել նախագծում, վերստուգման ժամանակահատվածը կարող է գործընթացին **ավելացնել ևս 2-4 շաբաթ**: Երբ SPR-ը հաստատվի, երեխաների խնամքի մատակարարը կարող է դիմել Շինարարության և Անվտանգության Բաժին՝ ստուգման համար:

SPR-ի գործընթացը տևում է 6-8 շաբաթ:

SPR-Ի ՎՃԱՐՆԵՐ

ՇԱՀՈՒՅԹ ՀԵՏԱՊՆԴՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ՝

$486.00

ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՏԱՐԵԿԱՆ $500,000-ԻՑ ՓՈՔՐ ԲՅՈՒՋԵՈՎ՝

$253.00

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (CUP) ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ(MCUP)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ինչպես ցույց է տալիս «Աղյուսակ. գոտիների սահմանումը Լոս Անջելեսի Շրջանում» բաժինը, Պայմանական օգտագործման թույլտվություն (CUP) կամ Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվություն (MCUP) կարող են պահանջվել որոշ գոտիներում երեխաների խնամքի կենտրոն բացելու համար: CUP-ը և MCUP-ը գոտիավորման (zoning) թույլտվություններ են, որոնք պահանջում են հաստատում այն քաղաքի կամ շրջանի կողմից, որտեղ գտնվում է տարածքը, և օգնում են քաղաքային և շրջանային իշխանություններին ապահովել, որ դրանց օգտագործումը համապատասխանի շրջակայքի բնակելի, առևտրային կամ այլ նպատակներով հողատարածքների օգտագործմանը: MCUP-ը կարգավորում է հողատարածքի այնպիսի օգտագործումն ու կառուցապատումը, որի ծավալն ու ազդեցությունը սահմանափակ է:

Հաստատվելու դեպքում CUP-ը և MCUP-ը կարող են ունենալ մի շարք պայմաններ, ինչպես օրինակ՝ աշխատանքային սահմանված ժամեր, երթևեկությանը վերաբերող կանոններ, կայանատեղիներին վերաբերող պահանջներ և այլն: CUP-ի և MCUP-ի դիմումները ստուգելիս Շրջանային Նախագծումը պետք է գործոնները գնահատելուց հետո նշի փորձաքննության հատկանշական արդյունքները, ինչպես օրինակ՝

- **1) Օգտագործման համապատասխանումը «Շրջանի ընհանուր նախագծի» հետ:**
- **2) Նախատեսվող երեխաների խնամքի կենտրոնի ազդեցությունը շրջակայքում ապրող կամ աշխատող մարդկաց առողջության, հանգստության, հարմարավետ զգալու կամ բարօրության վրա:**
- **3) Նախատեսվող տարածքի չափը և ձևը և**
- **4) Երեխաների խնամքի կենտրոնին սպասարկելու համար համապատասխան մուտքերի, հանրային ծառայությունների և շինությունների հասանելիությունը:**

*** Հավելյալ տեղեկությունների համար տես «Պայմանական օգտագործման ստուգումների արդյունքները գրելու ուղեցույց»-ը:**[18]

CUP-ի և MCUP-ի դիմումների փաթեթները պատրաստելը և ստուգման գործընթացով անցնելը կարող է երկար ժամանակ պահանջել, և հաստատումը երաշխավորված չէ: Երեխաների խնամքի մատակարարները կարող են օգնություն ստանալ CUP-ի և MCUP-ի գործընթացները հասկանալու հարցում՝ կապ հաստատելով Շրջանային Նախագծման Վարչության, անվճար իրավաբանական գործկալությունների հետ, ինչպես օրինակ՝ Հանրային Իրավաբանի (Public Counsel) և/կամ խորհրդատուի հետ: Խորհուրդ է տրվում, որպես առաջին քայլ, կապ հաստատել Շրջանային Նախագծման Վարչության հետ և խորհրդակցել նախագծող աշխատակիցներից որևէ մեկի հետ:

18 CUP-ի բացահայտումների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար այցելեք հետևյալ կայքէջը՝ https://planning.lacounty.gov/assets/upl/data/form_cup-bop.pdf

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ CUP-Ի ԵՎ & MCUP-Ի ՀԱՄԱՐ

Շրջակա միջավայրի գնահատումը ստուգում է նախագծի հնարավոր ազդությունը շրջակա միջավայրի վրա: Շրջակա միջավայրի գնահատումը պահանջվում է Պայմանական օգտագործման թույլտվության (CUP) և Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվության (MCUP) համար՝ համաձայն Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի Որակի Մասին Օրենքի (California Environmental Quality Act (CEQA)) և դրա ցուցումների:[19]

Երեխաների խնամքի մատակարարից պահանջվում է հանձնել Շրջակա միջավայրի գնահատման ձևը (Environmental Assessment Form(EAF))՝ որպես CUP-ի և MCUP-ի դիմումների փաթեթի մաս, և վճարն է

$399.00:

Շրջանային Նախագծի Վարչության (Regional Planning) աշխատակիցը կպատրաստի Նախնական ուսումնասիրութուն՝ պարզելու՝ արդյոք նախագիծը կունենա շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն, և կօգտվի դիմումի փաթեթում ներկայացված նյութերից (քարտեզներ, լուսանկարներ, կառուցապատման նախագիծ), գործի նյութից, Շրջանային Նախագծի ունեցած փաստաթղթերի տվյալներից և Շրջանի համապատասխան գործակալությունների և վարչությունների մեկնաբանություններից: Երեխաների խնամքի մատարարկից կարող է պահանջվել հանձնել ուսումնասիրություն՝ կապված տեխնիկական հարցերի հետ, ինչպես օրինակ՝ երթևեկության, աղմուկի, օդի որակի հետ, կամ հանձնել այլ զեկույցներ՝ կապված նախատեսվող երեխաների խնամքի կենտրոնում շինարարության կամ աշխատանքների հետ: [20]

CUP-ի կամ MCUP-ի համար անհրաժեշտ բոլոր պահանջվող նյութերը հավաքելուց հետո (ներառյալ լրացված EAF-ը) հաջորդ քայլն է կապ հաստատել Շրջանային Նախագծի Վարչության հետ և դիմումը հանձնելու համար հանդիպում նշանակել: Հանդիպման ժամանակ նախագծողը կստուգի դիմումի նյութերը: Եթե որևէ տեղեկություն կամ թուղթ պակասի, նախագծողը կտրամադրի բոլոր այն նյութերի ցուցակը, որոնք անհրաժեշտ է լրացնել, ինչպես նաև ուղղորդումներ՝ պահանջվող նյութերը ձեռք բերելու համար:

19 CAL. CODE REGS. tit. 14, div. 6, ch. 3 (2022); https://planning.lacounty.gov/view/ceqa_guidelines

20 Հիմնված նախնական ուսումնասիրության վրա՝ շրջակա միջավայրի ստուգումը կլինի՝ 1) կարգային ազատում (categorical exemption (CE)՝ հիմնված CEQA-ի մեկ կամ մի քանի ազատման կարգերի վրա, 2) բացասական հայտարարություն (negative declaration (ND))՝ առանց որևէ մեղմացնող հանգամանքի, 3) մեղմացված բացասական հայտարարություն (mitigated negative declaration (MND)՝պայմանական հաստատման համար ներառելով մեղմացնող հանգամանքները, ԿԱՄ 4) Շրջակա միջավայրի վրա ազդեցության զեկույց (Environmental Impact Report (EIR)). EIR-ը զեկույց է, որը տեղեկացնում է հանրությանը հանրային գործակալություններում որոշում կայացնողներին շրջակա միջավայրի վրա նախատեսվող նախագծի հնարավոր ազդեցությունների մասին, նշում է հնարավոր ուղիները՝ այդ ազդեցությունները մեղմելու համար, և նկարագրում է նախագծի ողջամիտ այլընտրանքային տարբերակները: ND-ն , MND-ն և EIR-ը կարող են պահանջել հավելյալ վճարներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ CUP-Ի ԵՎ MCUP-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երբ Պայմանական օգտագործման թույլտվության (CUP) և Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվության (MCUP) դիմումները Շրջանային Նախագծման Վարչության (Regional Planning) կողմից համարվեն ամբողջական, շրջակա միջավայրի համապատասխան փաստաթղթերը պատրաս լինեն և աշխատակազմը ավարտած լինի իր վերլուծությունը, գործը կուղարկվի հանրային լսման: Հանրային լսումը պահանջվում է՝ նախքան որոշում կընդունվի ընդունել կամ մերժել երեխաների խնամքի կերնտրոնի համար CUP-ի և MCUP-ի դիմումները: Այն սեփականատերերը, որոնց սեփականությունները գտնվում են կենտրոնից մինչև 500 ոտնաչափ շառավղով տարածության վրա, կստանան հանրային լսման մասին գրավոր ծանուցում, որը կնկարագրի նախատեսվող երեխաների խնամքի կենտրոնի գործողությունները: Որոշ վարչական շրջաններում/տարածքներում հանրային լսման մասին ծանուցումները կարող են ուղարկվել այն սեփականատերերին, որոնց սեփականությունները գտնվում են կենտրոնից մինչև 1000 ոտնաչափ շառավղով տարածության վրա: Հանրային լսման մասին ծանուցումը կներառի լսման օրը, ժամը և վայրը: Հանրային լսման մասին ծանուցումը նաև անհրաժեշտ է փակցնել շինության/տարածքի վրա:
Հանրային լսման ժամանակ Շրջանային Նախագծման Վարչության աշխատակիցները կներկայացնեն մանրամասներ՝ կապված նախատեսվող երեխաների խնամքի կենտրոնի կառուցվածի և գործողությունների հետ: Երեխաների խնամքի մատակարարը նույնպես կներկայացնի երեխաների խնամքի կենտրոնի կառուցվածի և գործողությունների հետ կապված մանրամասներ, ինչպես նաև երեխաների խնամքի կենտրոնի կարիքը այդ ընտրված տարածքում և դրա օգուտները համայնքի համար: Լսումը բաց է հարության հարցերի և դիտողությունների համար:

Հանդիպումներ, որոնք վարում է **Լսումների Պատասխանատուն (Hearing Officer)**

լինում են յուրաքանչյուր ամսվա

1-ին և **3-րդ**

երեքշաբթի օրը

Հանդիպումներ, որոնք վարում է **Շրջանային Նախագծման Հանձնաժողովը (Regional Planning Commission)**

լինում են յուրաքանչյուր ամսվա

1-ին, 2-րդ 3-րդ, 4-րդ

չորեքշաբթի օրը

ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՆԵՐՆ ԷԼ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԱՌԱՎՈՏՅԱՆ 9:00-ԻՆ

Regional Planning Commission
Hearing Room
150, Hall of Records, 320 West Temple Street, Los Angeles 90012

Հանրային Նախագծման աշխատակիցները կպատրաստեն զեկույց, որը մինչև հանրային լսումը հասանելի կլինի ընթերցման համար: Հանրային լսումից առաջ երեխաների խնամքի մատակարարը պետք է կապ հաստատի գործի համար նշանակվածի նախագծողի հետ՝ իմանալու, թե արդյոք հանրության անդամներից որևէ մեկը ներկայացրել է որևէ դիտողություն կամ հարց՝ կապված երեխաների խնամքի կենտրոնի հետ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝

Հանրային լսմանը պատրաստվելու համար երեխաների խնամքի մատակարարը պետք է նկատի ունենա՝

- Խոսել ապագա հարևանների հետ իրենց մտահոգությունների և հարցերի մասին՝ կապված նախատեսվող երեխաների խնամքի կենտրոնի հետ:
- Ծանուցել Վերահսկիչների Խորհրդի գրասենյակի անդամին, որը պատասխանատու է այն վարչական շրջանի համար, որում գտնվում է երեխաների խնամքի կենտրոնը՝ անձնակազմին ներկայացնելով ծրագրի նկարագրությունն ու նախագիծը և, եթե պատշաճ է, խնդրել նրանց աջակցությունը:
- Իրենց աջակիցներին խնդրել մասնակցել լսմանը և ներկայացնել երեխաների խնամքի կենտրոնի բացմանը նպաստող մեկնաբանություններ:
- Խնդրել նախագծի ճարտարապետին և տեխնիկական մյուս խորհրդատուներին մասնակցել լսմանը, որպեսզի պատասխանեն հարցերին:

Լսումների Պատասխանատուն կամ Շրջանային Նախագծի Հանձնաժողովը կարող են ընտրել հաստատել (պայմանով կամ առանց պայմանի) կամ մերժել դիմումը: Կարող է անհրաժեշտ լինել շարունակել լսումը՝ հնարավորություն տալու Շրջանային Նախագծի աշխատակիցներին և երեխաների խնամքի մատակարարին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ: **Երեխաների խնամքի մատակարարը կամ շահագրգիռ այլ կողմ ունեն 14 օր՝ դիմելու վերանայման համար: Եթե վերանայման հայց չի ներկայացվում, որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուն հաջորդող 15-րդ օրը:**

Ներկայումս պահանջվում է մոտավորապես 9-12 ամիս՝ CUP-ի կամ MCUP-ի վերաբերյալ հանրային լսում ունենալու համար:

ՇԱՀՈՒՅԹ ՀԵՏԱՊՆԴՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

MCUP-ի վճար՝
$1,864.00

CUP-ի վճար՝
$3,766.00

ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՏԱՐԵԿԱՆ $500,000-ԻՑ ՓՈՔՐ ԲՅՈՒՋԵՈՎ՝

MCUP-ի վճար՝
$1,864.00

CUP-ի վճար՝
$1,883.00

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լոս Անջելեսի Շրջանի չընգրկված տարածքներում (unincorporated areas) երեխաների խնամքի կենտրոնը պետք է իր տարածքում ունենա մեքենաների կայանատեղիներ հետևյալ հարաբերակցությամբ՝ 1 տեղ յուրաքանչյուր աշխատակցի համար, 1 տեղ բիզնեսի համար օգտագործվող յուրաքանչյուր մեքենայի համար, 1 տեղ յուրաքանչյուր 20 երեխայի համար, որոնց համար տրվել է երեխաների խնամքի արտոնագիրը: Երեխաների խնամքի կենտրոնը պետք է նաև ունենա տարածքում 1 սահանված վայր՝ երեխաներին մեքենայից իջեցնելու և մեքենա նստեցնելու համար:

CUP-Ի ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՎ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ (ZONING) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

Շրջանային Նախագծման Վարչությունը ստեղծել է գծապատկեր, որը նշում է CUP-ի գործընթացը և Գոտիավորման թույլտվության ստուգացանկը, որը նշում է դիմումի փաթեթը հանձնելու համար պահանջվող փաստաթղթերը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Շինարարության և Անվտանգության Բաժինն ապահովում է, որ շինությունների կառուցվածքը և շինարարությունը լինեն անվտանգ Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas) և հետևյալ քաղաքներում՝ Արտեզիա, Քարսոն, Սերրիտոս, Ինդուսթրի, Ըրվինդեյլ, Լա Քանյադա Ֆլինթրիջ, Լեյքվուդ, Լա Միրադա, Լոանդեյլ, Լոմիտա, Ռոլինք Հիլս, Ռոլինք Հիլս Էսթեյթ, Սանտա Ֆե Սփրինգս և Ուեսթլեյք Վիլիջ: Շինարարության և Անվտանգության Բաժնի ծառայությունները ներառում են՝ մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների համար շինարարական թույլտվության վկայականի տրամադրում, կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և խնամքի/պահպանման ստուգում և վերահսկում՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով:

Շինարարության թույլտվություններ կարող են պահանջվել նոր կառույցի շինարարության համար, արդեն գոյություն ունեցող շինությանը ավելացումներ անելու կամ այն վերանորոգելու համար: Սովորաբար շինարարության թույլտվություն պահանջվում է հետևյալի համար.

- **Նոր շինություններ**
- **Շինությունների ավելացումներ**
- **Վարձակալների համար բարեկարգումներ / շինության վերանորոգում**
- **Տարբեր մասեր** (տախտակամած, պատշգամբ, վեց ոտնաչափից բարձր ցանկապատ, հենապատեր, հաշմանդամության նշանների տեղադրում և քայլուղիներ)
- **Ձևափոխում և վերանորոգում** (օգտագործման կամ զբաղեցման փոփոխություն, խոհանոցի ձևափոխում, ծեփապատում, լուսամուտ(ներ)ի և դռան(դռների) փոխում և այլն)
- **Փորման աշխատանքներ**
- **Նոր, ընդլայնված կամ փոխված՝**
  - **էլեկտրական իրեր**
  - **մեխանիկական իրեր**
  - **խողովակաշարի մասեր**

Մինչև շինարարության թույլտվություն ձեռք բերելը պետք է Շինարարության և Անվտանգության Բաժինը ստուգի նախագծերը՝ վստահ լինելու, որ շինությունը համապատասխանում է Շինարարական Օրենսգրքի չափանիշներին: Այս գործընթացը հայտնի է որպես Շինարարության Նախագծի Ստուգում:

Շինարարական ծրագրերի մեծ մասի համար անհրաժեշտ է ունենալ ճշգրիտ և մանրամասն նախագծերի, բնութագրերի և օժանդակ փաստաթղթերի փաթեթ: Սովորական փոքր ծրագրերը կարող են ստուգվել Շինարարության և Անվտանգության Բաժնի գրասենյակ այցելության ժամանակ կամ առցանց՝ EPIC-LA-ի միջոցով, որը առցանց հարթակ է Շինարարության և Անվտանգության թույլտվությունների էլեկտրոնային ծառայությունների համար: Ավելի բարդ ծրագրերի համար կարելի է հանդիպում նշանակել Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ (AMERICANS WITH DISABILITIES ACT (ADA))

Բոլոր Երեխաների խնամքի կենտրոններից պահանջվում է համապատասխանել ADA –ի մատչելիության պահանջներին: «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը» քաղաքացիական իրավունքի դաշնային օրենք է, որն արգելում է խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և պահանջում է, որ բոլոր հանրային ծառայությունները և առևտրային հաստատությունները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ըստ դաշնային և նահանգային օրենքների՝ հաշմանդամություն ունեցողների համար մատչելիություն պահանջող օրենքներին համապատասխանելը լուրջ և նշանակալից պատասխանատվություն է, որը վերաբերում է Կալիֆորնիայում հանրությանը հասանելի բոլոր շենքերի սեփականատերերին և վարձակալներին:

Երեխաների խնամքի կենտրոնները պետք է ունենան ADA-ի նույն հատկանիշները, որոնք պահանջվում են առևտրային շինություններից: ADA-ի հատկանիշները կարող են ներառել հետևյալը, սակայն չսահմանափակվել միայն դրանցով՝ մատչելի զուգարաններ, ներսի և դրսի թեքահարթակներ, մայթեզրի թեքահարթակներ, ADA-ի՝ դռների մետաղյա մասնիկներ և հարվածային թիթեղիկներ (kick-plates), ազատ շարժվելու ուղի՝ հանրային օրինական ճանապարհից (public right-of-way), չսահող հատակի մակերես, աստիճանների եզրաժապավեններ (stair tread stripping), բազրիքի երկարացումներ (handrail extensions), հատակի՝ ազատ շարժվելու տարածքի չափսեր (maneuvering dimensions):

ADA-ի պահանջների մասին հավելյալ տեղեկություններ կարել է գտնել Հաշմանդամության Համար Մատչելիության՝ Կալիֆորնիայի Հանձնաժողովի **կայքէջում** (California Commission on Disability Access) և կապ հաստատելով Շինարարության և Անվտանգության Հետազոտությունների Բաժնի (Building & Safety Research Section) հետ՝ (626) 458-3170 համարով:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ/ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Երեխաների խնամքի մատակարարներին խրախուսվում է կապ հաստատել իրենց տարածքային Շինարարության և Անվտանգության գրասենյակի հետ կամ օգտագործել EPIC-LA-ի թույլտվությունների օգնական ինտերնետային գործիքը՝ որոշելու, թե իրենք ինչ նախագծերի և թույլտվությունների կարիք ունեն իրենց երեխաների խնամքի կենտրոնի վերանորոգման և/կամ շինարարության համար: Պարզելուց հետո, թե ինչ նախագծեր և թույլտվություններ են պահանջվում, երեխաների խնամքի մատակարարները կարող են համապատասխան դիմում(ներ)ի ձևերը գտնել EPIC-LA-ում: EPIC-LA-ի կայքում երեխաների խնամքի մատակարարները կարող են ստուգման և հաստատման համար հանձնել իրենց նախագծերը, բնութագրերը և օժանդակ փաստաթղթերը, վճարել թույլտվությունների վկայականների համար և դիմել թույլտվություն ձեռք բերելու համար:
EPIC-LA-ի գլխավոր էջում երեխաների խնամքի մատակարարները կարող են սեղմել “Apply” («Դիմել») և օգտագործել որոնման վանդակը՝ գտնելու “Commercial New Construction Building Permit-County”-ն (Բիզնեսի նոր շինարարության թույլտվություն. Շրջան), “Commercial Repair/Replacement Building Permit-County” (Բիզնեսի նորոգման/ փոխարինման շինարարական թույլտվություն. Շրջան) և “Commercial Addition/Alteration/TI Building Permit-County”-ը[21] (Բիզնեսի ավելացման/ձևափոխման/վարձակալների համար բրելավման շինարարական թույլտվություն. Շրջան):

Խստորեն հորդորվում է, որ երեխաների խնամքի մատակարարները խորհրդակցեն Շինարարության և Անվտանգության այն վարչաշրջանի գրասենյակի հետ, որտեղ գտնվում է իրենց երեխաների խնամքի կենտրոնը՝ մինչև ֆինանսների կամ շինարարության հետ կապված որևէ որոշում կայացնելը:

Որպես շինարարության անհրաժեշտ թույլտվությունները ձեռք բերելու՝ Շինարարության և Անվտանգության գործընթացի մի մաս՝ երեխաների խնամքի մատակարարները պետք է նաև ձեռք բերեն Հրշեջ Վարչության նախագծերի ստուգման թույլտվություն՝ երեխաների խնամքի կենտրոնում նոր շենքերի, առկա շենքերում ավելացումների, առկա շենքում կամ վարձակալված տարածքում վերանորոգումների համար: Հավելյալ տեղեկությունների համար տես էջ 56-ը:

21 Երեխաների խնամքի մատակարարները պետք է նախագծերի էլեկտրոնային տարբերակները հանձնեն որպես առանձին PDF փաստաթուղթ, իսկ այլ հաշվարկներն ու բնութագրերը՝ որպես առանձին PDF փաստաթուղթ: Վճարման անդորագիրը (invoice) էլ. փոստով կուղարկվի մատարարին և հղում կունենա EPIC-LA –ի համապատասխան անձնական էջին, և կարելի է վճարել անձամբ Շինարարության և Անվտանգության Վարչաաշրջանային Գրասենյակում՝ կամ դա անել առցանց՝ EPIC-LA-ի միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Նախագծի ստուգման և շինարարության թույլտվության վկայականի վճարները լինում են տարբեր՝ կախված աշխատանքի արժեքից: Գնահատման ամենավերջին ժամանակացույցը կարելի է գտնել այստեղ:

Ամենացածր արժեքը $106.80 է:

Թույլտվության վկայականի յուրաքանչյուր երկարացման համար գանձվում է թույլտվության վկայականի արժեքի 25%-ը:

Երեխաների խնամքի մատակարարները կարող են նաև կապ հաստատել Շինարարության և Անվտանգության Բաժնի հետ (626) 458-3173 համարով՝ հավելյալ տեղեկությունների համար:

Տես Աղբյուրների ցանկը՝ հավելյալ տեղեկությունների համար:

ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

1-3 ԱՄԻՍ

Երեխաների խնամքի կենտրոնի համար Շինարարության և Անվտանգության նախագծի ստուգման տևողությունը **1-ից 3 ամիս է՝** կախված ծրագրի բարդությունից:

ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆՈՒՄ Է 12 ԱՄԻՍ ՀԵՏՈ

Շինարարության և Անվտանգության կողմից տրված յուրաքանչյուր թույլտվության վկայականի ժամկետը **կլրանա**, եթե աշխատանքները **չսկսվեն 12 ամսվա ընթացքում:**

ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԺԱՄԿԵՏԻ ՄԻԱՅՆ 1-2 ԵՐԿԱՐԱՑՈՒՄ՝ ՈՉ ԱՎԵԼ ՔԱՆ 180 ՕՐՈՎ

Ժամկետի մեկ կամ ավելի երկարացումներ կարող են տրվել թույլտվության ժամկետի լրանալուց հետո **ոչ ավել քան 180 օրվա համար:**

Սովորաբար տրվում են ժամկետի երկարացման միայն 2 թույլտվություններ, եթե Շինարարության և Անվտանգության Բաժինը չի եզրակացնում, որ կան դժվարություններ:

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ / ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՒՄ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ / ՆԱԽԱԳԾԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

- ☐ **Վերնագրի թերթիկ՝ նախագծի փաթեթի համար:** Պահանջվում է նախագծի առաջին էջի վրա ունենալ՝ շինության հասցեն, սեփականատերերի և նախագիծը պատրաստողների անունները և հասցեները, իրավական նկարագիրը, գնահատողի կողմից տրված հողատարածքի համար(ներ)ը (assessor parcel number), գոտու սահմանումը (zoning designation), շինարարության տեսակը, բնակվող/զբաղեցնող խումբը (խմբերը), կայանատեղիների ամփոփ նկարագիրը, շինության չափսերը, հատակի մակերեսի հարաբերակցությունը, տարածքի ծածկույթի աղյուսակագրումը, գոյություն ունեցող, նախատեսվող և պահանջվող կայանատեղիների աղյուսակագրումը և նախագծի նկարագրությունը:

- ☐ **Տարածքի նախագիծ:** Ամբողջությամբ չափագրված տարածքի նախագիծ, որը ցույց է տալիս շինության բոլոր սահմանների գտնվելու տեղանքը, օգտագործել թույլատրվող բոլոր այլ տարածների (easements) չափսերը, հողատարածքի մակերեսը, կանաչափատ տարածքը, դեպի հյուսիս ուղղված սլաքը, բոլոր կառույցների / շինությունների սահմաններից պահվող հեռավորությունների (structure-to-property line setback) չափսերը (ներկայիս և նախատեսվող), բոլոր ներկայիս և նախատեսվող կոմունալ հաշվիչները, հանրային կոյուղու հետ կապերը, կրակի հրշիջման կետերի տեղանքը, և բոլոր քայլուղիների, մեքենաների ուղիների և կոշտ նյութերով ձևավորումների (hardscape) տեղանքն ու չափսերը: Եթե նախագծի ստեղծման համար կա պատասխանատու ճարտարապետ կամ մասնագետ-ինժեներ և նա դրոշմում է նախագծը, ապա նրանցից մեկը պետք է թանաքով դրոշմ (wet stamp) և թանաքով ստորագրություն (wet sign) դնի տարածքի նախագծի վրա:

- ☐ **Հատակագիծ:** Ամբողջությամբ չափագրված հատակագիծ է պահանջվում բոլոր հարկերի համար, որտեղ պետք է լինի շինարարություն: Պետք է նշել յուրաքանչյուր սենյակների ներկայիս և նախատեսվող օգտագործումը: Պետք է տրամադրել դռների և լուսամուտների համար ժամանակացույց՝ որոշելու դռների և պատուհանների չափսերը և տեսակները: Հատակագծերը պետք է ցույց տան ներկայիս և նախատեսվող բոլոր շինարարությունները:

- ☐ **Հաշմանդամություն ունեցողների համար մատչելիություն:** Ամբողջությամբ չափագրված մանրամասներ, որոնք ցույց են տալիս հաշմանդամություն ունեցողների համար մատչելիության պահանջներին համապատասխանում, ներառյալ՝ հաշմանդամների համար կայանատեղիներ, ուղիներ՝ հաշմանդամների համար կայանատեղիներից շենքի մուտք հասնելու համար, շենքի մուտք, շենքի ներսում շարժվելու ուղիներ և շինության ներսում հաշմանդամություն ունեցողների համար մատչելիություն, ներառյալ՝ զուգարանները, հեռախոսները, ցայտաղբյուրները և պահարաններ/սեղանները (counter):

- ☐ **Արտաքին պատերի բարձրացում:** Ամբողջությամբ չափագրված բարձրության գծագրեր, որոնք ցույց են տալիս ներկայիս և ավարտված բարձրացումների սահմանները, պատերի և տանիքի երեսպատման նյութերը և բոլոր մուտքերի (բացվածքների) տեղանքները: Գծագիրը պետք է ցույց տա շինության բոլոր կարևոր հատվածների բարձրությունը: Բարձրացումները պահանջվում են միայն նոր շինությունների և ավելացումների համար:

*Վերը նշված նյութերը և լրացված դիմումը պետք է հանձնել Շինարարության և Անվտանգության Բաժին:

Նախագծերը, բնությագրերը և օժանդակ փաստաթղթերը կարող են պատրաստվել արտոնագիր ունեցող քաղաքացիական ճարտարագետի (ինժեների), ճարտարապետի կամ գծագրողի կողից: Նախագծի կառուցվածքային մասնիկները պետք է ստուգված և կնքված լինեն արտոնագիր ունեցող ինժեների կողնից:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Երբ Շինարարության նախագծի ստուգումը հաստատվի, կարող է տրվել շինարարության թույլտվության վկայական: Թույլտվության վկայականի տրամադրումը կախված է նաև այլ գործակալությունների հաստատումներից, որոնք կարող են ներառված լինել՝ կախված աշխատանքների ծավալից: Թույլտվությունը կարող է տրվել միայն համապատասխան արտոնագիր(գրեր) և ապահովագրություն ունեցող շինարարական կապալառուին, որոշ դեպքերում՝ շինության սեփականատիրոջը, կամ գործակալին, որը ներկայացում է այս երկուսից որևէ մեկին:

Ի հավելումն նոր կառուցվող շինության, շինութան ավելացումների կամ վերանորոգման (վարձակալների համար բարեկարգումներ) համար շինարարության թույլտվության ձեռքբերմանը, Շինարարության և Անվտանգության Բաժինը կարող է պահանջել երեխաների խնամքի մատակարարից նաև ձեռք բերել հետևյալ թույլտվությունները.



- **Էլեկտրականությանը վերաբերող թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ որևէ հոսանքալար է տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում կամ վերանորոգվում:
- **Մեխանիկական մասերի համար թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում, հեռացվում կամ վերանորոգվում են ջեռուցման, օդափոխման, օդորակման սարքերը կամ դրանց խողովակաշարերը:
- **Խողովաշարի համար թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը պահանջվում է, երբ տեղադրվում, փոփոխվում, վերակառուցվում, հեռացվում կամ վերանորոգվում են խողովակաշարը, ջրի խողովակները, հակահրդեհային ցողիչ համակարգը, խոտածածկի ցողիչ համակարգը, կոյուղու համակարգը կամ լողավազանի խողովակները: Այն պահանջվում է նաև ջրի տաքացուցիչը փոխելու համար:
- **Փորման աշխատանքների (grading) թույլտվություն:** Այս թույլտվության վկայականը սովորաբար պահանջվում է տարածքում նոր շինության կամ շինության ավելացման համար ցանկացած տեսակի փորումներ անելու համար:

Թույլտվության համար վճարումը որոշվում է ըստ աշխատանքի արժեքի: Փորելու թույլտվության արժեքը որոշվում է ըստ փորվող հողի ծավալի: Նշված մյուս թույլտվությունների արժեքները կախված են վարդակների և սարքերի քանակից և/կամ մակերեսի քառակուսի ոտնաչափից:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳՈՒՄ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Բոլոր այն շինարարությունները կամ աշխատանքները, որոնց համար պահանջվում է շինարարական թույլտվություն, ենթակա են Շինարարության և Անվտանգության Բաժնի կողմից ստուգման: Երբ թույլտվությունը տրամադրվում է, տրվում է ստուգման արձանագրության քարտ, որը փակցվում է աշխատանքների վայրում: Երբ թույլ տրված աշխատանքները հասնում են որոշակի փուլի, թույլտվություն ստացողը պարտավոր է զանգահարել **Շինարարության և Անվտանգության շրջանային այն գրասենյակ,** որը տրամադրել է թույլտվությունը՝ ստուգում նշանակելու համար: Տեսուչը կստուգի աշխատանքները՝ պարզելու՝ արդյոք դրանք համապատասխանում են օրենք(ներ)ի պահանջներին, հաստատված նախագծին ու բնութագրերին և արդյոք աշխատանքը համապատասխանում է թույլտվությամբ սահմանված աշխատանքին:

Պահանջվող ստուգայցերի քանակը կախված է աշխատանքի բարդությունից: Ստուգման արձանագրության քարտում կնշվի, թե շինարարության որ փուլում է պահանջվում ստուգում: Սովորաբար ամբողջ աշխատանքը կարիք ունի ստուգման մինչև շինարարության թույլտվություն ստանալը: Երբ տեսուչը հաստատի այդ հատվածը, աշխատանքը կարող է անցնել շինարարության հաջորդ փուլ: Ծրագիրը համարվում է ավարտված, եթե ձեռք են բերվել բոլոր պահանջվող գործակալությունների հաստատումները և թույլտվությանբ արված աշխատանք(ներ)ը անցել է(են) վերջնական ստուգումը (օր.՝ ստուգման արձանագրության քարտը և թույլտվության վկայականը ստորագրված են և թվագրված՝ ունեն նշված ամսաթիվ): Երեխաների խնամքի մատակարարները կարող են կապ հաստատել **Շինարարության և Անվտանգության շրջանային գրասենյակի հետ՝** ստուգումների արժեքներն իմանալու համար:

ՏԱՐԱԾՔԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ (OCUPANCY PERMIT)

Երեխաների խնամքի կենտրոնը չի թույլատրվում բացել կամ աշխատեցնել քանի դեռ Շինարարության և Անվտանգության Վարչությունը չի հաստատել նոր շինությունը, շինության ավելացումը կամ վերանորոգումը (վարձակալների համար բարեկարգում) և չի տրամադրել Տարածքի զբաղեցման վկայական: Զբաղեցման վկայականը ներառում է շինության թույլտվության վկայականի համարը, շենքի հասցեն և վարձակալի տարածքը, եթե կիրառելի է, սեփականատիրոջ և, եթե կիրառելի է, վարձակալի անունն ու հասցեն, շենքի այն հատվածի նկարագրությունը, որի համար վկայականը տրվում է, հայտարարություն, որ շենքի նկարագրված հատվածները համապատասխանում են Շրջանի Շինարարական Օրենսգրքի պահանջներին, որոնք վերաբերում են զբաղեցնող խմբերին և բաժիններին, ինչպես նաև օգտագործման նպատակին, որի համար նախատեսվող զբաղեցումը դասակարգվել է, և բաժինների ինժեներ(ներ)ի անուն(ները): Տարածքի զբաղեցման վկայականը կտրվի վերջնական ստուգումից և բոլոր վճարումներն անելուց հետո:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ (CCLD)

ԸՆՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության, Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժինը (CCLD) երեխաների խնամքի արտոնագրեր է տրամադրում երեխաների խնամքի բոլոր հաստատություններին, որը ներառում է բոլոր երեխաների խնամքի ընտանեկան տները և երեխաների խնամքի կենտրոնները: CCLD-ն պատասխանատու է՝ ապահովելու երեխաների անվտանգությունն ու առողջությունը՝ վերահսկելով երեխաների խնամքի հաստատությունները և դրանց հարկադրելով համապատասխանել Կալիֆորնիայի Կարգավորումների Մասին Օրենքի Վերնագիր 22-ին (California Code of Regulations, Title 22) և Կալիֆորնիայի Առողջության և Անվտանգության Մասին Օրենքին (California Health & Safety Code):

Չնայած երեխաների խնամքի մատակարարները ձեռք են բերում անհրաժեշտ նախագծերի ստուգումները, նախագծերի փորձաքննությունները և /կամ թույլտվությունները Շրջանի համապատասխան բաժիններից, որոնք նշված են այս Ուղեցույցում՝ նրանցից պահանջվում է հայտնել CCLD-ին երեխաների խնամքի արտոնագրված հաստատություններում որոշ փոփոխությունների մասին, որոնք նկարագրված են ստորև:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ CCLD-ԻՆ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԵՐ. ՍՏՈՒԳԱՑԱՆԿ ☑

- ☐ 1. Նախքան արտոնագրված երեխաների խնամքի կենտրոնում վերանորոգում կամ շինարարություն սկսելը երեխաների խնամքի մատակարարը պետք է հայտնի CCLD –ին նախատեսվող փոփոխությունների մասին, ներառյալ կառուցվածքային փոփոխությունները, որոնք կրճատում են ներսի և դրսի գործողությունների համար տարածքների ընդհանուր քանակը (օրինակ՝ սենյակների ավելացում):[22]
- ☐ 2. Արտոնագրված երեխաների խնամքի մատակարարները պետք է հայտնեն CCLD-ին, թե երբ է նախատեսվում վերանորոգում կամ շինարարություն անելը և երբ այն կավարտվի և արդյոք երեխաները մուտք են ունենալու վերանորոգվող կամ կառուցվող տարածքներ:
- ☐ 3. Երբ վերանորոգումը /շինարարությունը ավարտվի, CCLD-ն կարիք կունենա տարածքում ստուգումներ անցկացնելու, որպեսզի համոզվի, որ դրանք համապատասխանում են Կալիֆորնիայի Կարգավորումների Մասին Օրենքի Վերնագիր 22-ին (California Code of Regulations, Title 22) :
- ☐ 4. Երբ վերանորոգումը /շինարարությունը ավարտվի, երեխաների խնամքի մատակարարը պետք է CCLD-ին տրամադրի վերանորոգման /շինարարության համար պահանջվող տարածքում բոլոր շինարարական ստուգումների պատճենները:

13 CAL. CODE REGS. tit. 22, div. 12, ch. 3, § 102416.3 (2009).

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հրշեջ Վարչությունը ստուգում է երեխաների խնամքի կենտրոնները՝ ապահովելու, որ դրանք համապատասխանեն հրդեհային անվտանգության չափանիշներին, և վերացնելու վտանգավոր պայմանները, որոնք սպառնում են կյանքին, շրջակա միջավայրին, շինությանը. սա ներառում է ապահովում, որ երեխաների խնամքի կենտրոնների ինչպես ներսը (օր.՝ տուն, ավտոտնակ), այնպես էլ դուրսը (օր.՝ կանաչապատ տարածք) լինեն մաքուր և ազատ:

ՀՐԴԵՀԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍՏՈՒԳԱՅՑԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եթե Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության և/կամ Համայնքային Խնամքի Արտոնագրման (CCLD) վարչությունները որոշեն, որ վերանորոգման կամ շինարարության համար պահանջվում է ստուգում և հաստատում Հրշեջ Վարչության կողմից, այս վարչությունները կապ կհաստատեն Հրշեջ Վարչության հետ՝ կազմակերպելու ստուգումները տարածքում:

Երեխաների խնամքի հաստատություններում հրդեհի հետ կապված ստուգումները սովորաբար ներառում են հետևյալը՝ ելքերի, լույսերի, ծանր իրերի՝ (օր.՝ դռներ), ծխի դետեկտորների, եփելու հատվածի /խոհանոցի (ներառյալ՝ ապահովելու, որ բարձր տեղակայված համակարգերը ապահովեն խոհանոցի անձնակազմի անվտանգությունը), հրդեհի ազդանշանների վահանակների ստուգում, ինչպես նաև հրդեհը կանխարգելող գործիքների հավաստագրերի ստուգում: Հրդեհի հետ կապված ստուգումներն ավարտելուց հետո Հրշեջ Վարչությունը կհայտնի իր ստուգումների արդյունքների մասին CCLD-ին:

ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ՝ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Որպես Շինարարության և Անվտանգության գործընթացի մի մաս՝ ձեռք բերելու շինարարության անհրաժեշտ վկայական(ներ)ը, երեխաների խնամքի մատակարարները պետք է նաև ձեռք բերեն Հրշեջ Վարչության նախագծերի ստուգման թույլտվություն՝ երեխաների խնամքի կենտրոնում նոր շենքերի, առկա շենքերում ավելացումների, առկա շենքում կամ վարձակալված շենքում վերանորոգումների համար: Հրշեջ Վարչության կողմից նախագծի ստուգման դիմումը կարելի է գտնել **այստեղ:**

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԺԵՔՆ Է՝

$

$920.00

Տագնապի ազդանշանային համակարգի նախագծի և հրշեջ ցողիչների նախագծի համար համվելյալ վճարումներով

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

ՔԱՅԼԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ☑

☐ 1. Գտնել համապատասխան տարածք՝ երեխաների խնամքի կենտրոնի համար:

☐ 2. Երբ երեխաների խնամքի կենտրոնի տեղը որոշվի և հաստատվի, որ այն գտնվում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքում (unincorporated area)՝ ստուգելով կայքէջը, երեխաների խնամքի մատակարարը պետք է կապ հաստատի Շրջանային Նախագծման, Շինարարության և Անվտանգության, Հրշեջ վարչությունների հետ՝ պարզելու՝ արդյոք տարածքի համար անհրաժեշտ են գոտիավորման, շինարարության և /կամ հրշեջ վարչության թույլտվությունները:

☐ 3. Երեխաների խնամքի մատակարարը կարող է պարզել, թե որն է իր երեխաների խնամքի կենտրոնի ընտրված տարածքի գոտին և արդյոք պահանջվում է ձեռք բերել Տարածքի նախագծի ստուգում (SPR), Երկրորդային պայմանական օգտագործման թույլտվություն (MCUP) կամ Պայմանային օգտագործման թույլտվություն (CUP), որպեսզի տարածքը օգտագործվի որպես երեխաների խնամքի կենտրոն՝ կապ հաստատելով Շրջանային Նախագծման Վարչության հետ (213) 974-6411 հեռախոսահամարով:

☐ Նշում: Կանխված այն տեղեկությունից, որը կտա Շրջանային Նախագծման Վարչությունը՝ երեխաների խնամքի կենտրոնից կարող է պահանջվել SPR-ի, MCUP-ի կամ CUP-ի համար հանձնել դիմում և օժանդակ փաստաթղթեր: MCUP-ի կամ CUP-ի համար պահանջվում են հանրային լսումներ:

☐ 4. Երեխաների խնամքի կենտրոնի շենքերում որոշ վերագնորոգումների և շինարարության համար կպահանջվի նաև Շինարարության և Անվտանգության կողմից Նախագծի ստուգում, որպեսզի ձեռք բերվեն անհրաժեշտ թույլտվությունների վկայականները: Երեխաների խնամքի մատակարարներին խրախուսվում է կապ հաստատել Շրջանային Նախագծման Վարչության գրասենյակի հետ կամ օգտագործել use EPIC-LA-ի Թույլտվությունների օգնական առցանց գործիքը, որպեսզի պարզեն, թե ինչ նախագծեր և վճարումներ են իրենց անհրաժեշտ:

☐ Նշում: Շինարարական բոլոր աշխատանքները, որոնց համար պահանջվում է շինարարության թույլտվություն, ենթակա են Շինարարության և Անվտանգության կողմից ստուգման: Վերջնական ստուգումից և բոլոր վճարումներն անելուց հետո կտրամադրվի Տարածքի զբաղեցման վկայական (Certificate of Occupancy):

☐ 5. Որպես Շինարարության և Անվտանգության գործընթացի մի մաս՝ ձեռք բերելու շինարարության անհրաժեշտ վկայական(ներ)ը, երեխաների խնամքի մատակարարները պետք է նաև ձեռք բերեն Հրդեհի կանխարգելման ծրագրի ստուգում՝ երեխաների խնամքի կենտրոնում նոր շենքերի, առկա շենքերում ավելացումների, առկա շենքում կամ վարձակալված շենքում վերանորոգումների համար: Հրդեհի կանխարգելման ծրագրի ստուգման դիմումը կարելի է գտնել այստեղ:

☐ 6. Երեխաների խնամքի մատակարարները, որոնց երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիր է տրվել CCLD-ի կողմից, նախքան երեխաների խնամքի կենտրոնի շինություններում վերանորոգումներ կամ շինարարություն սկսելը պետք է այդ մասին տեղյակ պահեն CCLD-ին:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԵՊՊԱՏԿԵՐՆԵՐ

✱ Կապ հաստատեք CCLD-ի հետ՝ երեխաների խնամքի կենտրոնների արտոնագրերի պահանջների համար: Նշում՝ CCLD-ին չի տրամադրի երեխաների խնամքի կենտրոնի արտոնագիր, քանի դեռ տարածքի համար ձեռք չեն բերվել գոտևորման, շինարարության, հրդեհի անվտանգության թույլտվությունները և հաստատումները.

ՍԿՍԵՔ ԱՅՍՏԵՂԻՑ

Արդյո՞ք երեխաների խնամքի կենտրոնի նախատեսված վայրը գտնվում է Լոս Անջելեսի չընդգրկված տարածում (unincorporated area): Պարզելու համար այցելեք կայքէջ:

ԱՅՈ

Արդյո՞ք Լոս Անջելեսի Շրջանը թույլատրում է ընտրված վայրում երեխաների խնամքի կենտրոն բացել: Ստուգեք Գոտիների սահմանման աղյուսակը այս ուղեցույցի 40-րդ էջում:

ՈՉ

Ընտրեք մեկ այլ վայր, որտեղ թույլատրվում է երեխաների խնամքի կենտրոն՝ համաձայն Գոտիների սահմանման աղյուսակի, որը նշված է այս ուղեցույցի 40-րդ էջում:

ՈՉ

Հարցրեք ընգրկված քաղաքի (incorporated city) Նախագծման և Շինարարության և Անվտանգության Վարչություններին՝ պարզելու՝ արդյոք որևէ թույլտվության անհրաժեշտություն կա:

ԱՅՈ

Կապ հաստատեք Շրջանային Նախագծի, Շինարարության և Անվտանգության, Հրշեջ վարչությունների հետ՝ թույլտվության գործընթացի և մատչելիության պահանջների համար: Ձեռք բերեք պահանջվող թույլտվությունների դիմումների ձևերը և վճարման ժամանակացույցները:

Պահանջվո՞ւմ է SPR, CUP կամ MCUP:

Դիմումների ձևերի և դիմելու գործընթացի համար այցելեք EPIC-LA:

Նաև կապ հաստատեք Շրջանային Նախագծման հետ՝ հավելյալ տեղեկությունների համար:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է CUP կամ MCUP

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ (ENVIRONMENTAL REVIEW)

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է SPR

Պահանջվո՞ւմ է Շինարարության և Անվտանգության կողմից նախագծի ստուգում: Կապ հաստատեք Շինարարության և Անվտանգության տեղամասային գրասենյակի հետ և օգտվեք EPIC-LA թույլտվությունների օգնականից՝ պարզելու, թե ինչ նախագծեր և թույլտվություններ են պահանջվում:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Պատրաստեք և հանձնեք պահանջվող բոլոր նյութերը:

ՏՐՎԵԼ Է ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Շինարարությունը կարող է սկսվել:

Տեղեկացրեք CCLD-ին նախքան արտոնագրված երեխաների խնամքի կենտրոնի շենքում վերանորոգումներ կամ շինարարություն սկսելը:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պետական հաստատությունները հաճախ գումար են գանձում՝ փակելու աշխատանքներն իրականացնելու համար ծախսերը, ներառյալ՝ երեխաների խնամքի հաստատությունների համար: Ներքևի աղյուսակը ցույց է տալիս պետական հաստատությունները՝ իրենց համապատասխան վճարումներով:[23]

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

ԳՈՏԻԱՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	Շահույթ հետապնդող երեխաների խնամքի կենտրոնների համար	Շահույթ չհետապնդող (nonprofit) երեխաների խնամքի կենտրոնների համար, որոնց ընդհանուր բյուջեն $500,000-ից քիչ է
ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ (SPR)	$486.00	$253.00
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (MCUP)	$1,864.00	$1,864.00
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (CUP)	$3,766.00	$1,883.00
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ՆԱԽՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	$399.00	$399.00

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐՇԵՋ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ	ՎՃԱՐ
ՇԵՆՔԻ՝ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ	$920.00
ՀՐՇԵՋ ՑՈՂԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ (վճարը կախված է ցողիչների գլխիկների քանակից)	ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԴԵՀԻ ԱԶԳԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄ (վճարը կախված է սարքերի քանակից)	ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ	ԱՆՎՃԱՐ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	ՎՃԱՐ
ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ	Առնվազն՝ $106.80
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ[20]	Կախված է աշխատանքի արժեքից

23 Այս Ուղեցույցում նշված վճարները գործում են 2022թ.-ի սեպտեմբերի դրությամբ:

Այս Աղբյուրների ցանկը ներառում է հղումներ, կոնտակտային տվյալներ և այս Ուղեցույցում հղված պետական գործակալությունների, շահույթ չհետապնդող գործակալությունների և առևտրային միությունների ամփոփ նկարագրեր:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժին (CCLD)
California Department of Social Services, Community Care Licensing Division (CCLD)
(916) 654-1541 | **www.cdss.ca.gov**
Համայնքային Խնամքի Արտոնագրման Վարչության (CCLD) առաքելությունն է խթանել համայնքային խնամքի հաստատություններում յուրաքանչյուր անձի առողջությունը, անվտանգությունը և կյանքի որակը՝ արդյունավետ համագործակցային կարգավորիչ հարկադիր կատարման համակարգերի կիրառման միջոցով: Երեխաների Խնամքի Արտոնագրման Ծրագիրը Կալիֆորնիայում ապահովում է վերահսկում և օրենքների պահպանում արտոնագրված երեխաների խնամքի կենտրոններում և երեխաների ընտանեկան խնամքի տներում 19 Շրջանային Գրասենյակների միջոցով: Շրջանային Գրասենյակների ցանկը կարելի է գտնել **այստեղ:**

Լոս Անջելեսի Շրջանի Վերահսկիչների Խորհուրդ
Los Angeles County Board of Supervisors
(213) 974-1411 | **www.bos.lacounty.gov**
Վերահսկիչների Խորհուրդը Լոս Անջելեսի Շրջանի, որը չարտերային շրջան է, կառավարող մարմինն է: Որպես այդպիսին՝ այն ունի յուրահատուկ գործառույթներ՝ ծառայելու որպես ամբողջ Միացյալ Նահանգներում ամենամեծ և ամենաբարդ շրջանի կառավարության գործադիր և օրենսդիր ղեկավար: Քաղաքացիական ծառայության անձնակազմը, որը կատարում է Շրջանի վարչությունների և գործակալությունների պարտականությունները, սպասարկում է Շրջանի ավելի քան 10 միլիոն բնակչության կարքիները: Վերահսկիչների Խորհուրդը նաև վերահսկում է գոտիավորման (zoning) դիմումները և պատասխանատու է Շրջանի 88 չընդգրկված տարածքներում (unincorporated areas) քաղաքային ծառայությունների համար:

Լոս Անջելեսի Շրջանի Շրջանային Նախագծման Վարչություն (Շրջանային Նախագծում)
Los Angeles County Department of Regional Planning (Regional Planning)
(213) 974-4103 | **www.planning.lacounty.gov**
Շրջանային Նախագծման Վարչությունը Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում իրականացնում է հողատարածքի օգտագործման նախագծումների բոլոր գործառույթները: Շրջանային Նախագծման Վարչության ծառայությունները ներառում են՝ երկարաժամկետ նախագծերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և իրականացում, շրջակա միջավայրի ստուգում, գոտիավորման (zoning) օրենքների կիրառում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated areas): Շրջանային Նախագծման Վարչության բոլոր մասնաճյուղերի ցանկը կարելի է գտնել այստեղ:

Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն
Los Angeles County Fire Department (Fire Department)
(323) 881-2411 | **www.fire.lacounty.gov**
Հրշեջ Վարչությունը կենտրոնանում է՝ հանրությանը կրթելու անվտանգության ճիշտ գործողություններ կատարելու առավելությունների հարցում, ինչպես նաև գտնելու և վերացնելու այն բոլոր վտանգավոր պայմանները, որոնք սպառնում են կյանքին, շրջակա միջավայրին և շինություններին: Հրդեհի Կանխարգելման Շրջանային Միավորները գրասենյակներ ունեն ամբողջ Լոս Անջելեսի Շրջանում, և դրանք բաժանված են երեք աշխարհագրական շրջանների՝ Հյուսիսային, Կենտրոնական և Արևելյան Շրջաններ:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ (OAECE)
Los Angeles County Office for the Advancement of Early Care and Education (OAECE)
(213) 974-6411 | **www.childcare.lacounty.gov**
OAECE-ն ձևավորում է քաղաքականությանը վերաբերող առաջարկներ, օժանդակում է ծրագրավորմանը և տրամադրում է մի շարք ծառայություններ՝ նպատակ ունենալով բարելավել նախադպրոցական խնամքի և կրթության ծրագրերի մատչելիությունը, որակն ու հասանելիությունը: OAECE-ն աջակցում է ջանքերին՝ խրախուսելու նախադպրոցական խնամքի և կրթության ծառայությունների ընտրության հարցում ծնողների տեղեկացված լինելը և այս ծառայություններում ծնողների բովանդակալից ներգրավվածությունը: Ի վերջո, OAECE-ն աշխատում է տարբեր բաժինների հետ՝ խրախուսելու, որ ընտանիքները հասանելիություն ունենան այն հատուկ օգնությանը, որի կարիքն ունեն:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժին (Շինարարություն և Անվտանգություն)
Los Angeles County Public Works, Building & Safety Division (Building & Safety)
(626) 458-3173 | www.dpw.lacounty.gov

Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժինը տրամադրում է ծառայություններ՝ ապահովելու շինությունների անվտանգ կառուցվածք, կառուցում, շինարարական ավարտված նախագծերի հաստատում և օրենքների պահպանում սկսած 1933թ.-ի մարտից, երբ ընդունվեցին Շրջանի՝ շինարարության կանոններն ու չափանիշները: Շինարարության և Անվտանգության Բաժինը տրամադրում է մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների շինարարական թույլտվություն, կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և խնամքի/պահպանման ստուգում և հսկողություն՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով: Չընդգրկված համայնքներում (unincorporated communities) շինարարական ծառայություններ են տրամադրվում Հանրային Աշխատանքի գլխավոր գրասենյակներում՝ Շինարարության և Անվտանգության 11 վարչաշրջանային գրասենյակներից մեկում, որոնք ծառայում են չընդգրկված համայնքներին, 14 Պայմանագրային Քաղաքների (Contract City) գրասենյակներում, որոնք ծառայում են ընդգրկված քաղաքներին:

Թույլտվության դիմումները և թույլտվության վկայականները կարող են ուղարկվել կամ ձեռք բերվել առցանց՝ EPIC-LA կայքէջի միջոցով:

ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ (NONPROFIT) ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվճար իրավաբանական օգնություն

Երեխաների Խնամքի Իրավունքի Կենտրոն
Child Care Law Center
(415) 558-8005 | www.childcarelaw.org

Երեխաների Խնամքի Իրավունքի Կենտրոնը օրենսդրության, հանրային աջակցության և դատերի միջոցով կենտրոնանում է ցածր եկամուտներով ընտանիքների համար մատչելի երեխաների խնամքը ավելացնելու վրա, երեխաների խնամքի մատակարարների հավասար (անաչառ) վարձատրության վրա, հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների վրա: Երեխաների Խնամքի Իրավունքի Կենտրոնը երեխաների խնամքի մատակարարներին տրամադրում է աղբյուրների ուղեցույց և անվճար խորհրդատվություն:

Հանրային Փաստաբան
Public Counsel
(213) 385-2977 x 300 | www.publiccounsel.org

Հիմնադրված 1970թ.-ին՝ Հանրային Փաստաբանը պետության ամենամեծ անվճար իրավաբանական ծառայություններ տրամադրողն է , որն օգտագործում է իրավական նորարական մոդելներ՝ խթանելու արդարադատությունը, հույսը և հնարավորությունները ցածր եկամուտներով և ոչ սպիտակամորթ համայնքերում: Հանրային Փաստաբանի Նախադպրոցական Խնամքի և Կրթության Իրավաբանական Բաժինը երեխաների խնամքի մատակարարներին անվճար իրավաբանական ծառայություններ մատուցող միակ կառույցն է Լոս Անջելեսի Շրջանում: Ծրագրի նպատակն է պահպանել և ավելացնել երեխաների որակյալ նախադպրոցական խնամքի ու կրթության քանակը Լոս Անջելեսի Շրջանում՝ օգնելով մատակարարներին հաղթահարել երեխաների խնամքի ծրագրերի բացման և դրանց աշխատեցնելու խոչընդոտները:

Հանրային Փաստաբանը, աջակցելով և երեխաների ընտանեկան խնամքի տների մատակարարներին, և շահույթ չհետապնդող (հասարակական) երեխաների խնամքի կենտրոններին, օգնում է խնդիրների լուծման հարցում, ներառյալ՝ սեփականատերերի խտրական վերաբերմունք տանը կազմակերպվող ցերեկային խնամքի մատակարարների նկատմամբ, հողատարածքի օգտագործման / գոտիավորման (zoning) սահմանափակումներ՝ պարտադրված տեղական իշխանությունների կողմից, նահանգի արտոնագրման կանոններին համապատասխանում, բիզնեսի՝ պատասխանատվության և ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրների լուծում, պայմանագրերի և գործարքային այլ փաստաթղթերի կազմում, որոնք կպաշտպանեն մատակարարին և նրա բիզնեսը, աշխատանքային օրենքների ըմբռնում և դրանց համապատասխանում:

Աղբյուրներ և Աջակցություն՝ երեխաների խնամքի մատակարարների համար

Երեխաների Խնամքի Միջոցների և Ուղղորդումների Ցանց (R&R)
California Child Care Resource and Referral Network (R&R)
(415) 882-0234 | **www.rrnetwork.org**
Երեխաների Խնամքի Աղբյուրների և Ուղղորդումների գործակալությունները (R&R) պետության կողմից ֆինանսավորվող համայնքային ծրագրեր են, որոնք գոյություն ունեն Կալիֆորնիայի յուրաքանչյուր շրջանում: R&R-ները կազմում են լավ զարգացած համակարգ, որոնք օգնում են ծնողներին, երեխաների խնամքի մատակարարներին և տեղական համայնքներին: Տեղական աղբյուրների և ուղղորդումների գործակալություններն իրենց համայնքներում պահում են երեխաների խնամքի մատակարարների՝ համընդհանուր տվյալների համակարգ, ներառյալ արտոնագրված երեխաների խնամքի տների և երեխաների խնամքի կենտրոնների տվյալների, ստուգում են, թե ինչ է մատակարարների արտոնագրման կարգավիճակը, ինչ լեզուներով են խոսում, տարիքային ինչ խմբերի են ծառայում, ինչ ժամեր են առաջարկում և կենտրոններում կամ երեխաների ընտանեկան խնամքի տներում հասանելի քանի տեղ կա, աշխատում են երեխաների խնամքի մատակարարների հետ՝ բարելավելու խնամքի որակը և պահպանելու և ավելացնելու քանակը իրենց շրջաններում, առաջարկում են վերապատրաստում, որն օգնում է մատակարարներին մնալ այդ գործում, և կրթում են տեղական համայնքներին և առաջնորդներին՝ հասկանալու երեխաների խնամքի հետ կապված խնդիրները և պատրաստվելու երեխաների խնամքի կարիքները հոգալուն: R&R-ների ծառայություններն անվճար են և հասանելի երեխաների խնամքի բոլոր մատակարարների համար:

Լոս Անջելեսի Երեխաների Խնամքի Միություն
The Child Care Alliance of Los Angeles
(323) 274-1380 | **www.ccala.net**
Լոս Անջելեսի Երեխաների Խնամքի Միությունը (CCALA) Լոս Անջելեսի Շրջանում Աղբյուրների և Ուղղորդումների (R&R), ինչպես նաև Այլընտրանքային Վճարումների (Alternative Payment) 10 գործակալությունների միջև գործընկերություն է: Այս տասը գործակալությունները միասին ծառայություններ են մատուցում Լոս Անջելեսի Շրջանի հազարավոր ընտանիքների: Այդ ծառայությունները ներառում են՝ օգնել ընտանիքներին գտնել և ճանաչել համայնքում գոյություն ունեցող աջակցության ծրագրերը, երեխաների խնամքի մատակարարներին առաջարկել համապարփակ վերապատրաստում և մասնագիտական զարգացման այլ ծրագրեր, իրավասու ընտանիքներին տրամադրել երեխաների խնամքի վարձի փոխհատուցման կտրոններ (subsidized child care vouchers), ընտանիքներին և երեխաների խնամքի մատակարարներին տալ տեղեկություններ այնպիսի թեմաների մասին, ինչպիսք են՝ շահերի պաշտպանումը, առողջությունը, սնուցումը և ընտանիքներն ամրացնող այլ նախաձեռնությունները:
Ամբողջ շրջանի տարածքում CCALA-ները, համագործակցող գործակալությունները կարողություն ունեն՝ տրամադրելու երեխաների համապարփակ խնամքի և վաղ ուսուցման ծառայություններ և ծրագրեր, բամաթիվ լեզուներով կապ հաստատելու անմիջապես մատակարարների, ծնողների և երեխաների հետ և ունենալու մշակութային առանձնահատկությունների գիտակցում և խորը պատկերացում իրենց եզակի համայնքերի մասին՝ բազմապիսի հաճախորդների հետ արդյունավետորեն աշխատելու համար:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճարտարապետների Ամերիկյան Ինստիտուտ (AIA)
The American Institute of Architects (AIA)
(800) 242-3837, տարբերակ 2 | **www.aia.org**
Ճարտարապետների Ամերիկյան Ինստիտուտը (AIA) Միացյալ Նահանգներում մասնագիտական կազմակերպություն է ճարտարապետների համար: Գլխավոր գրասենյակը Վաշինգտոն քաղաքում է (Washington, D.C), և AIA-ն առաջարկում է կրթություն, կառավարության շահերի պաշտպանում, համայնքի վերակառուցում և հասարակության հետ կապեր՝ նպաստելու ճարտարապետություն մասնագիտությանը և բարելավելու դրա հանրային կերպարը: AIA-ի ընկերությունների տեղեկատուն, որի հղումը նշված է վերում, ներկայացնում է AIA-ի անդամ ճարտարապետներին՝ ըստ տարածքի ընտրելու համար:

Քաղաքացիական Ճարտարագետների Ամերիկյան Միություն (ASCE)
The American Society of Civil Engineers (ASCE)
(800) 548-2723 | **www.asce.org**
Քաղաքացիական Ճարտարագետների Ամերիկյան Միությունը (ASCE) ներկայացնում է ավելի քան 150,000 քաղաքացիական ճարտարագետների (ինժեներ) 177 երկրներում: Հիմնադրված 1852թ.-ին՝ ASCE-ն երկրի ամենահին ճարտարագիտական համայնքն է: Փորձառու քաղաքացիական ճարտարագետ կարելի է գտնել՝ կապ հաստատելով ASCE-ի հետ:

ՁԵՎԱԹՂԹԵՐ

- Շինարարության թույլտվության/ Նախագծի ստուգման դիմում
- Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի Որակի Մասին Օրենքի ուղեցույց
- Թույլտվության ձևաթղթեր
  - Գոտիավորման (zoning) թույլտվության ցուցումներ և ստուգացանկ
  - Դիմումի գործընթացի գծապատկեր
  - Ուղեցույց՝ գրելու Ձեր Պայմանական օգտագործման (CUP) թույլտվության արդյունքների հայտագիրը
  - CUP-ի արդյունքների հայտագիր
  - CUP-ի փոփոխության արդյունքներ
  - Սեփականության և համաձայնության վկայագիր
  - Շրջակա միջավայրի գնահատման տեղեկատվության ձևաթուղթ
  - Կայանատեղիների աղյուսակի ձևաթուղթ
  - Կայանատեղիների աղյուսակի ձևաթուղթ. իսպաներեն
- Հրդեհի կանխարգելման նախագծի ստուգման դիմում
- Պայմանական օգտագործման թույլտվության ձևաթղթեր
  - Երկրորդային պայմանական օգտագործման (MCUP) թույլտվության ստուգացանկ
  - Ուղեցույց՝ գրելու Ձեր Երկրորդային պայմանական օգտագործման (MCUP) թույլտվության արդյունքների հայտագիրը
  - MCUP-ի արդյունքների հայտագիր
  - Շրջակա միջավայրի գնահատման տեղեկատվության ձևաթուղթ
- Տարածքի սեփականատիրոջ/ տանտիրոջ համաձայնություն. երեխաների խնամքի տուն (LIC 9149)
- Տարածքի սեփականատիրոջ/ տանտիրոջ ծանուցում. երեխաների խնամքի տուն (LIC 9151)
- Տարածքի նախագծի ստուգում. հողատարածքների օգտագործման ստուգացանկ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- **Շինարարության և Անվտանգության նախագծի ստուգման գնահատման ժամանակացույց**
- **CUP-ի ստուգման գործընթացի գծապատկեր**
- **Բնակարանների անաչառ տրամադրման պաշտպանություն՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար**
  - **Ա**նգլերեն, իսպաներեն, չինարեն, պարսկերեն, կորեերեն, ռուսերեն, սոմալերեն, թագալերեն, վիետնամերեն
- Ուղեցույց՝ երեխաների ընտանեկան խնամքի տների համար
- Տան սեփականատերերի և վարձակալների ուղեցույց՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար
- Շրջանային Նախագծման դիմումների վճարներ
- Գոտիավորման (zoning), բիզնեսի և բնակարանների համար աղբյուրներ՝ երեխաների ընտանեկան խնամքի մատակարարների համար